

**Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
Վանաձորի մասնաճյուղ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2017-2021թթ.)**

Ռազմավարական ծրագիրը ստեղծվել է ՀԱՊՀ հոգաբարձուների խորհրդի 29.10.2016թ. թիվ 10/16-02 որոշման հանձնարարականի համաձայն, ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի տնօրենի 09.02.2017թ. թիվ 5/Ը հրամանով ձևավորված Ռազմավարական ծրագրի ստեղծման հանձնաժողովի (Հավելված 1) կողմից:

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի կատարման արդյունքները և ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի 2017-2021թթ. ռազմավարական ծրագիրը քննարկվել են և ընդունվել մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 21-ի թիվ 2 ընդլայնված նիստում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ՄԱՍՆԱՃՅՈՒՂՆ ԱՅՍՕՐ.....	4
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	6
ՀԱՊՀ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2012-2016ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ	7
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴԻԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	16
ՆՊԱՏԱԿ 1	16
ՆՊԱՏԱԿ 2	18
ՆՊԱՏԱԿ 3	22
ՆՊԱՏԱԿ 4	25
ՆՊԱՏԱԿ 5	26
ՆՊԱՏԱԿ 6	29
ՆՊԱՏԱԿ 7	31
ՆՊԱՏԱԿ 8	35
Հավելված 1	39
Հավելված 2	40
Հավելված 3	50

ՆԱԽԱԲԱՆ

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղն իր առաջին ռազմավարական պլանը մշակել և ընդունել է 2006թ.-ին՝ 2007-2011թթ. համար, Tempus-TACIS UM-JEP 25058-2004 «Միջավայրով ուղղորդված ռազմավարական պլանավորում ՀՊՃՀ-ում» նախագծի շրջանակներում:

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի երկրորդ ռազմավարական ծրագիրը, կառուցվածքային առումով հիմնականում պահպանելով նախորդի կառուցվածքը, ներառել է նախորդ ռազմավարական պլանի կատարման արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև հիմնվել է ՀՊՃՀ ռեկտորի զարգացման և բարեփոխումների, ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի տնօրենի զարգացման և բարեփոխման հայեցակարգերի հիմնադրույթների, ինչպես նաև ՀՊՃՀ 2011-2015թթ. ստրատեգիական պլանի վրա:

ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի երրորդ ռազմավարական ծրագիրը կազմված է 8 նպատակներից, ծրագրի նպատակները և խնդիրները բխում են տարածաշրջանի, Լոռու մարզի զարգացման խնդիրներից և հիմնվում են ՀԱՊՀ հիմնադրամի ռեկտորի, ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի տնօրենի զարգացման հայեցակարգերի հիմնադրույթների, ինչպես նաև ՀԱՊՀ 2016-2020թթ. ստրատեգիական պլանի վրա: Հաշվի է առնվել Մասնաճյուղի ներքին և արտաքին միջավայրային վերլուծությունը, որը թույլ է տվել բացահայտել նրա ուժեղ և թույլ կողմերը, զարգացման հնարավորություններն ու վտանգները:

Ռազմավարական ծրագրի հիմնական թիրախներն են թույլ կողմերի վերացումը, ուժեղ կողմերի պահպանումն ու ամրապնդումը, արտաքին հնարավորությունների արդյունավետ օգտագործումն ու վտանգների մեկուսացումը կամ շրջանցումը:

Ռազմավարական ծրագիրը կաշխատի, եթե միարժեքորեն ընդունվի այն իրականացնող բոլոր մասնակիցների կողմից, դառնալով յուրատեսակ ճանապարհային քարտեզ, ուղղորդիչ ուժ հետագա գործունեության համար:

Բարի երթ մաղթելով ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի 2017-2021թթ. Ռազմավարական ծրագրին, համոզված ենք, որ պոլիտեխնիկցիները ապագայում էլ կգործեն ի զարգացումն ճարտարագիտական կրթության, ի բարօրություն մեր ժողովրդի և ի հզորացումն հայոց պետականության:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂՆ ԱՅՍՕՐ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղը հիմնադրվել է 1959թ. և մինչ այժմ տվել է 9000-ից ավելի շրջանավարտ: Նրանց շարքում են ՀՀ ԱԺ պատգամավորներ, մարզային և քաղաքային համայնքների ղեկավարներ, գործարանների տնօրեններ, արտադրության կազմակերպիչներ, մեքենաշինության, շինարարության, տեղեկատվական տեխնոլոգիաների և բանկային համակարգերի, տրանսպորտի, էներգետիկայի և այլ ոլորտների գլխավոր ճարտարագետներ, առաջատար մասնագետներ:

Մասնաճյուղը Լոռու տարածաշրջանի տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարագիտական կրթության և գիտության կենտրոնն է: Լոռու մարզում ստեղծվել է մի յուրատեսակ տեխնոլոգիական կրթական միջավայր, որտեղ գործում են **ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղը, նրա ավագ դպրոցը և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը:** Այս միջավայրը կրթության, արտադրության, գիտության, տեխնոլոգիական

նորաստեղծության մի համալիր է, որը հնարավորություն է տալիս աշակերտներին, ուսանողներին կերտել իրենց ճարտարագիտական կարիերան՝ սկսած աշակերտական նստարանից մինչև բարձրակարգ մասնագետներ՝ ապահովված բարձր վարձատրվող աշխատատեղերով: Տեխնոլոգիական կենտրոնի բոլոր լաբորատորիաները և լսարանները անվճար հիմունքներով տրամադրվում են Պոլիտեխնիկի ուսանողներին և դասախոսներին:

Մասնաճյուղում ընդունելություն է կատարվում հետևյալ մասնագիտություններով.

Ճարտարագիտության բակալավրի ծրագրով՝

1. Տնտեսագիտություն
2. Ծրագրային ճարտարագիտություն
3. Մեքենաշինություն և նյութերի մշակում
4. Տրանսպորտային համակարգեր
5. Շինարարություն
6. Քիմիական տեխնոլոգիաներ

Մագիստրոսական ծրագրով՝

1. Տնտեսագիտություն
2. Շինարարություն:

Մասնաճյուղի 2 ֆակուլտետների (Բնական գիտությունների և տեղեկատվական համակարգերի, Տեխնոլոգիաների և ճյուղային տնտեսագիտության) 7 ամբիոններում (Հումանիտար առարկաների և մարմնակրթության, Մաթեմատիկայի և գրաֆիկայի, Կիրառական ֆիզիկայի, Մեքենաշինության և մետալուրգիայի, Տրանսպորտային համակարգերի, Թեթև արդյունաբերության ճարտարագիտության և քիմիական տեխնոլոգիաների, Շինարարության և լեռնային գործի) աշխատում են 58 դասախոսներ, նրանցից 32-ն ունեն գիտական աստիճան, այդ թվում՝ 5 դոկտորներ:

Մասնաճյուղն ունի տարածաշրջանային գործընկերների մեծ ցանց. ավելի քան 40 ձեռնարկություններ: Մասնաճյուղում գործում են համակարգչային, ֆիզիկայի, շինանյութերի, քիմիայի, տրանսպորտային միջոցների կառուցվածքի, ճանապարհային երթևեկության կանոնների, տեքստիլ նյութագիտության, թեթև արդյունաբերության տեխնոլոգիայի, մեքենաշինության տեխնոլոգիայի, արգելակային սարքավորումների և հարմարանքների ուսումնագիտական արհեստանոց-լաբորատորիա, գրաֆիկայի, երկրաբանության կաբինետներ, անգլիախոսների ակումբ, տեխնոլոգիական կարողություններով լսարաններ, էլեկտրոնային ընթերցասրահ, ռոբոտատեխնիկական խմբակ, փակ և բացօթյա մարզահրապարակներ: Բոլոր մասնաշենքերում առկա է Wi-Fi ինտերնետային կապ: Հարուստ Պրոնոզյանի անվան լսարանն ունի տեխնիկական հնարավորություններ՝ on-line կապ ստեղծելու Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Երևանի կրթահամալիրի և տարածաշրջանային մասնաճյուղերի միջև: Արդեն գործում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գերժամանակակից Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաների (ՀԱՃԼ) մասնաճյուղը՝ մեքենագիտության և էլեկտրատեխնիկայի գծով, որը ստեղծվել է «Արդիական, միասնական Պոլիտեխնիկ» դրամաշնորհի շրջանակներում:

Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցը գործում է 1996 թվականից: Շրջանավարտների գերակշիռ մասը համալրել և համալրում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական համակազմը: Շրջանավարտներից 5-ը գիտությունների թեկնածուներ են: Ավագ դպրոցում ակտիվ գործում է ռոբոտաշինության խմբակ, որն ունեցել է բազմաթիվ նվաճումներ և հաղթանակներ: Մասնակցելով Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի կողմից կազմակերպվող բնագիտա-տեխնիկական ստուգատեսին, «Ական փտրող» ռոբոտների մրցույթին, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) կողմից իրականացված ԴիջիԿոդ կիրառական ծրագրավորման պատանեկան ամենամյա մրցույթին՝ արժանացել են լավագույն անվանակարգերի:

Մասնաճյուղում գործում է նաև «Որակի ապահովման և վերահսկման» բաժին, նրա կազմում. արտաքին կապերի և ուսանողական կարիերիայի ծառայությունը:

Մասնաճյուղն ակտիվ մասնակցություն և հարուստ փորձ ունի նաև միջազգային ծրագրերում (DIUSAS, PICQA, ARARAT, INARM): Մասնաճյուղը գիտական և կրթական լայն կապեր ունի Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Իտալիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Սլովակիայի, Շվեդիայի, Հունաստանի և այլ երկրների համալսարանների հետ:

Մասնաճյուղում ավանդույթ են դարձել ուսանողական ամենամյա գիտաժողովների կազմակերպումը և լավագույն աշխատանքների խրախուսումը:

ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղը հատկապես կարևորում է համագործակցությունը Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ: ՎՏԿ-ն բարենպաստ միջավայր է ստեղծում բուհի համար նորարար մտքերի, գաղափարների իրագործման, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքները նոր բնագավառներում օգտագործելու համար: Պոլիտեխնիկի ուսանողները պրակտիկայի ընթացքում օգտվում են կենտրոնում առկա «Մետաղամշակման ճարտարագիտական» և «Եռաչափ տպիչների ճարտարագիտական» լաբորատորիաներից: Ավագ դպրոցի աշակերտներից 8-ը սովորում են Yandex-ի Ծրագրավորման դպրոցում, որը Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի (EIF) և Yandex-ի Ծրագրավորման դպրոցի համատեղ կրթական ծրագիր է՝ նախատեսված 9-11-րդ դասարանների աշակերտների համար:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի հիմնական առաքելությունն է.

- Նպաստել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը, արդյունաբերության վերականգնմանը և տեխնոլոգիական վերազինմանը՝ ինժեներական որակյալ աշխատուժի ձևավորման, արտադրության ու բիզնեսի հետ արդյունավետ գործակցային կապերի հաստատման և ինովացիոն հետազոտությունների կազմակերպման միջոցով:
- Աշխատաշուկայի կարիքներին և մարզի բնակչության պահանջմունքներին համահունչ՝ իրականացնել ինժեներական կրթության բարձրորակ ծրագրեր և մատուցել անհրաժեշտ ծառայություններ՝ Համալսարանի գիտակրթական ներուժի և տեխնոլոգիական կարողությունների առավելագույն օգտագործմամբ:

- Նախապատրաստել ուսանողներին արդյունավետ աշխատանքային գործունեությանը և շարունակական մասնագիտական առաջընթացին, ստեղծել նպաստավոր միջավայր անհատի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար:

ՀՊՃՀ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2012-2016 ՈԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՈԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՐԱՆՆԵՐԸ

Լոռու մարզի տնտեսության իրադրային վերլուծությունը 2012-2016 թթ. համար

Մասնաճյուղը եղել և մնում է մարզի ճարտարագիտական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների վերարտադրության և զարգացման հիմնական աղբյուրը: Մասնաճյուղի զարգացման և աշխատանքների հետագա պլանավորման համար կարևոր նշանակություն ունի Լոռու մարզի նախորդ հնգամյակի տնտեսության իրադրային վերլուծությունը:

Հանրապետության Համախառն ներքին արդյունքը 2015թ. կազմել է 5,058.2մլրդ. դրամ, Լոռու մարզում այն կազմել է 237.5մլրդ դրամ, աճը 2009թ.-ի համեմատությամբ՝ 204.7%: ՀՆԱ-ի տեսակարար կշիռը հանրապետական ընդհանուր ցուցանիշում կազմել է 5.0%: Մեկ շնչի հաշվով մարզի ՀՆԱ-ն 2015թ.-ին կազմել է 1,041.807դրամ, որը զիջում է ՀՀ-ում ամենաբարձր ցուցանիշ ունեցող Սյունիքի մարզին շուրջ 1.8 անգամ, իսկ միջին հանրապետական ցուցանիշին՝ 1.6 անգամ: ՀՆԱ-ի աճը 2009-2015թթ.-ին մեկ շնչի հաշվով կազմել է 253.6% (ամենաբարձրը ՀՀ-ում), որը արդյունք է նաեւ բնակչության զգալի նվազմանը (19.1%):

Հանրապետության Համախառն ներքին արդյունքում մարզի արդյունաբերության բարձր ցուցանիշը պայմանավորված է հանրապետությունում առաջատար արդյունաբերական մարզ լինելու հանգամանքով:

Արդյունաբերության համախառն ներքին արդյունքի տեսակարար կշիռը մարզի 2015թ.-ի համախառն ներքին արդյունքում կազմում է 34.6%, աճը 2011թ.-ի նկատմամբ 154.6% եւ այն գերազանցում է համեմատելի մարզերի ցուցանիշին Շիրակին՝ շուրջ 3.0 անգամ եւ Տավուշին՝ 11.1անգամ:

2015թ. մարզի արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառներում գրանցված 18037 ձեռնարկություններից և անհատ ձեռնարկատերերից տնտեսական գործունեություն են ծավալել 8593-ը (47.6%), որից՝ 495-ը արդյունաբերության ոլորտում: 2011թ. նկատմամբ մարզի ՀՆԱ-ի աճը կազմել է 145.6%, իսկ արդյունաբերության ոլորտում 154.6%:

Արդյունաբերության ոլորտի վերլուծությունից պարզ է դառնում, որ մարզի ձեռնարկությունների մեծամասնությունը ՓՄՁ-ներ են, սակայն արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում շուրջ 76%-ը բաժին է ընկնում 9 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններին, փոքր և միջին բիզնեսին՝ 24%-ը: 2015թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերության 8.9%, գյուղատնտեսություն՝ 7,5%, շինարարություն՝ 5.6%, մանրածախ առևտուր՝ 3.6% և ծառայությունների՝ 1.5%:

Արդյունաբերության հիմնական ուղղությունները հանքագործական (միակ մարզը ՀՀ հյուսիսային մարզերից), մշակող (մասնավորապես՝ մետաղագործական և սննդի) և թեթև արդյունաբերություններն են (Վանաձորում՝ թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը): Մարզի արդյունաբերության ընդհանուր ծավալում հանքարդյունաբերության

տեսակարար կշիռը կազմել է 45.7%, մշակող արդյունաբերությանը՝ 43.8%, էլ.էներգիայի արտադրությանը՝ 9.6%, ջրամատակարարմանը և այլ ճյուղերինը՝ 0.9%:

2015թ. մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2011թ. համեմատությամբ աճել է 163.7%-ով, հանրապետության 132.8%-ի, Շիրակի մարզի 95.4%-ի և Տավուշի մարզի 161.7%-ի դիմաց: Միայն 2015թ ընթացքում մարզի 4 արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրել են իրենց գործունեությունը, իսկ 6-ը սկսել են արտադրանք թողարկել:

Մարզում առկա են մետաղական հանքավայրեր (պղինձի, ոսկու, մոլիբդենի, բազմամետաղների, ֆելզիտային և դացիտային տուֆեր, հանքային ջրեր և այլն): Հիմնախնդիր են հանդիսանում գործող ձեռնարկությունները, որոնք աշխատում են հիմնականում իրենց հզորությունների 15%-30% սահմաններում, ունեն նոր սարքավորումներով և տեխնիկայով վերազինման կարիք, ինչպես նաև նոր շուկաների բացահայտման:

Որպես աղետի գոտի, մարզում վերջին տարիներին զգալի աշխատանքներ են տարվել շինարարության ոլորտում: 2015թ. հիմնական միջոցների գործարկման ծավալը մարզում կազմել է 7897.2 մլն դրամ, որը 2011թ. մակարդակը գերազանցել է 170.4%-ով, այն դեպքում, երբ այն հանրապետությունում նվազել է՝ 72.7%: Հիմնական միջոցների գործարկման ամենամեծ ծավալը մարզում եղել է 2014թ.՝ 100 749.9 մլն դրամ, երբ շահագործվել է «Թեղուտ» ՓԲԸ-ն: Մեկ շնչի հաշվով շինարարության ծավալը 2015թ. մարզում կազմել է 119449 դրամ, միջին հանրապետական 160574 դրամի դիմաց(74.4%):

Տեղեկատվական տեխնոլոգիաներ: Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի շահագործումը լայն հնարավորություն է մարզը դարձնելու տարածաշրջանային բարձր տեխնոլոգիաների միջազգային կենտրոնի: Այն ենթադրում է նոր աշխատատեղերի ստեղծում: 2016-ին ՎՏԿ-ի ծրագրերի շրջանակներում վերապատրաստվել են ավելի քան 2000 աշակերտ-ուսանողներ, եւ ստեղծվել 4 նոր ընկերություններ: Նախատեսվում է Վանաձորում ԹՈՒՄՈ կենտրոնի մասնաճյուղի հիմնում: Նոր տեխնոլոգիաների ներդրմամբ մարզի գյուղական կյանքի ակտիվացմանն ուղղված Դեբեդ համայնքի հովտում կառուցվում է ՀՀ-ում առաջին Սմարթ կենտրոնը:

Լոռու մարզում կրթության ոլորտը կարևորվում է որպես կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման գլխավոր նախապայմաններից մեկը, ինչպես նաև տնտեսության առաջընթացն ապահովող առաջնային գործոն եւ այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կրթությունը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին: ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղը համագործակցելով ՎՏԿ-ի հետ այսօր ռեալ հնարավորություն ունի, նախկին հզոր տնտեսությունից դեռևս մնացած առկա մարդկային ներուժով հանդերձ, նոր շունչ հաղորդելու տարածաշրջանի զարգացմանը՝ տնտեսության տարբեր ճյուղերում (քիմիա, սարքաշինություն, մեքենաշինություն, ռոբոտատեխնիկա եւ այլն):

Հեռահաղորդակցում: Լոռու մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետությունում գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սելլ / USU ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ), իսկ վերջին 3 տարում ինտերնետ ծառայություն ևս 3 մասնավոր ընկերություններ: Մարզի բոլոր քաղաքներն ապահովված են 3G կապով, 3G բջջային կայանները՝ օպտիկամանրաթելային կաբելային

գծերով: «Արմենթել» ՓԲԸ-ն Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: ՀՀ փոստային կապի «Հայփոստ-թրաստ» ԲԲԸ Լոռու մարզի 137 փոստային մասնաճյուղերը ապահովելում են մարզի համայնքների 100 տոկոս ծածկույթը: 16 ՀՀ Լոռու մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 80% ծածկույթը և մարզի բնակչության 86.9%: Լոռու մարզի ամբողջ տարածքն ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է հանրապետական եւ օտարերկրյա թվային 8 հեռուստաընկերությունների հաղորդումներ, մարզային «Ֆորտունա TV», գործում են 6 տեղական հեռուստաընկերություններ: Մարզկենտրոնում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ: Տեղական ռադիոցանց ունեն Վանաձոր եւ Սպիտակ համայնքները:

Լոռու մարզի մրցակցային առավելությունն է դեպի Վրաստան տանող երկու միջպետական՝ M6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման և M3 Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհները եւ մարզի տարածքով անցնող Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը:

Ուղևորաշրջանառության գծով մարզի ցուցանիշը նվազել է շուրջ 16.5%-ով, հանրապետության ցուցանիշի 8.3% նվազման դեպքում, իսկ ներհանրապետական ուղևորաշրջանառությունը նվազել է շուրջ 12%, հանրապետության ցուցանիշի 7.8% նվազման դեպքում:

Ուղևորափոխադրումներից սպասարկվում է մարզի բնակչության մոտ 95%-ը: Մարզում գործում են 62 ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ, որոնցից 15-ը սպասարկվում են 14 կազմակերպությունների կողմից: Ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացվում են մարզի խոշոր 3 քաղաքներում:

Մարզով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհները կազմում են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 12.4 %-ը:

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի նախորդ, 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների ամփոփումն, ըստ Մասնաճյուղի գործունեության և զարգացման ուղղությունների, հնարավորություն է տալիս արձանագրելու հետևյալը.

Ընդունելություն և ուսանողական համակազմ

Վերջին տարիների ընդունելության վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջանավարտների թվի տարեցտարի նվազման պայմաններում ուսանողական կայուն համակազմի պահպանման և աշխատաշուկայում մրցունակ ու պահանջված կադրերի պատրաստման համար հարկավոր է անընդհատ լավարկել կրթական ծրագրերն ու մասնագիտությունների ցանկը:

Բակալավրի կրթական ծրագրով Մասնաճյուղի ուսանողական համակազմը առկա ուսուցման համակարգում մնացել է նույնը՝ 229 ուսանող, իսկ հեռակա ուսուցման համակարգում աճել է 36%-ով (234-ից՝ 319):

2016թ., ելնելով ընդունելության օպտիմալացումից, 8 մասնագիտությունների փոխարեն ընդունելություն է կատարվել 5 խոշորացված մասնագիտությունների գծով:

2015թ. մագիստրոսի կրթական ծրագրով կատարվել է հեռակա ուսուցման ընդունելություն «Շինարարություն» մասնագիտությամբ: 2016թ. դրությամբ պատկերը մագիստրատուրայում հետևյալն է. առկա ուսուցման բաժնում ուսանողների թիվը 2012թ. նկատմամբ աճել է 27-ից՝ 29, հեռակա համակարգում ուսանողների թիվը՝ 7:

Այսպիսով, Մասնաճյուղի հիմնական կրթական ծրագրերով համակազմը 2016թ. կազմել է 675 ուսանող, 2012թ.-ին՝ 550, համակազմի ծավալը 2012թ. նկատմամբ աճել է 22.7% -ով:

Անհրաժեշտ է ավելի ակտիվ և արդյունավետ դարձնել կապերն ու շփումները Վանաձորի և մարզի դպրոցների, տեխնիկական ուղղվածությամբ միջին մասնագիտական հաստատությունների հետ, կազմակերպել և իրականացնել մարզի քոլեջների հետ ծրագրային և ուսումնամեթոդական բնույթի համատեղ գործառույթներ, հանդիպումների և ցուցահանդեսային-գովազդային հանդեսների կազմակերպման միջոցով ապահովել բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների հոսքը դեպի Մասնաճյուղ, ընդլայնել պոտենցիալ դիմորդների համար մագիստրատուրայի ընդունելությանը վերաբերող տեղեկատվության ծավալներն ու հասանելիությունը:

Վերջին 5 տարվա (2012-2016թթ.) ընդունելության արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ չնայած նրան, որ հիմնական կրթական ծրագրերով ուսանողական համակազմի ծավալը 2016 թվին 2012թ. նկատմամբ աճել է 22,7 %-ով, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով համակազմի կողմնորոշիչ ցուցանիշը չի ապահովվել, որը պայմանավորված է հիմնականում արտաքին գործոններով:

Հարկավոր է շարունակել բուհի և նորաստեղծ տեխնոլոգիական կենտրոնի համագործակցությունը, շարունակել աշխատանքները համալսարանական միջավայրը, նրա ավագ դպրոցը տարածաշրջանում ավելի գրավիչ դարձնելու ուղղությամբ, որպեսզի ապահովվի ուսանողական համակազմի պահպանումը:

Ուսուցման որակ և արդյունավետություն, կրթական բարեփոխումներ

Մասնաճյուղում ստեղծված են որակի ապահովման ներքին համակարգի իրականացման տարրերը, որոնք, ՀԱՊՀ-ի համապատասխան բաժնի հետ համատեղ ձևավորել են ՀԱՊՀ-ի որակի ապահովման միասնական վարչական մասնաճյուղային ենթակառուցվածք, մշտադիտարկումների, ստուգայցերի, վերլուծությունների, հարցումների, հարցախոյզերի, հանդիպումների և նման այլ գործիքների շնորհիվ, զարգանում և կատարելագործվում են՝ դառնալով Մասնաճյուղում իրագործվող կարևորագույն գործընթացների իրատեսական գնահատման և որակական վերահսկման մշտական գործիք:

Ըստ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՄԿՈԱԱԿ) 2013թ. սահմանած որակի ապահովման և հավատարմագրման 10 չափանիշների, ՀԱՊՀ-ն, իր մասնաճյուղերով, Հայաստանում առաջիններից է, որ անցել է ինստիտուցիոնալ փորձնական հավատարմագրում: Այս գործընթացին ակտիվորեն մասնակցել է նաև մեր Մասնաճյուղը, ստանալով հսկայական աշխատանքային փորձ:

Մասնաճյուղում գործում է մշտական բնույթ կրող և իր դրական արձագանքը տարբեր շահակիցների կողմից ստացած քննաշրջանների ընթացքի վերահսկման կոմպլեքսային միջոցառումների հաջողված գործընթաց:

ՀԱՊՀ մերթոդական աջակցությամբ և համատեղ՝ ՀԱՊՀ որակի ապահովման պորտալում, Մասնաճյուղն 2015-2016 ուստարում առաջին անգամ մասնակցեց շրջանավարտներին ուղղված online-հարցմանը, որի նպատակն էր պարզել շրջանավարտների բավարարվածության աստիճանը Մասնաճյուղից իրենց ուսումնառության տարիների ընթացքում: Մասնաճյուղի մասնակցությունը՝ 100%:

Հաշվետու ժամանակաշրջանում ստեղծվել և հաջողությամբ գործում է «Մաթեմատիկա և գրաֆիկա» ամբիոնի «ամպային» փորձնական հարթակը (մնացած ամբիոնների համար հարթակների կառուցվածքները ստեղծված են, աշխատանքներ են տարվում տեղեկատվության թվայնացման և տեղադրման ուղղություններով):

Մասնաճյուղի որակի ապահովման և վերահսկման բաժինը համալրված է համապատասխան աշխատակազմով, կազմտեխնիկայով և կահույքով, այն մշտապես համալրվում և արդիականանում է:

Մասնաճյուղի որակի ապահովման համակարգի բոլոր աշխատակիցները ստացել են որակի ապահովման ընդհանուր հարցադրումների, ինչպես նաև ինքնավերլուծության իրենց մասնաբաժինների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Պարբերաբար իրականացվող վերապատրաստումների և վարժանքների արդյունքում վերոհիշյալ աշխատակիցներից ոմանք մասնագիտական լուրջ աճ են գրանցում:

Մասնաճյուղի որակի ապահովման և վերահսկման բաժնի նախաձեռնությամբ իրականացվել են ՀԱՊՀ-ում և Մասնաճյուղում նախկինում մշակված, սակայն գործնականորեն գրեթե չփորձարկված, կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման ու վերահաստատման չափանիշների և ընթացակարգերի մասնակի վերանայումներ և լրամշակումներ, ապահովելով «դասախոսամետ»-ից՝ «ուսանողամետ» կրթությանը զանգվածային անցնելու բոլոր նախադրյալները:

Մասնաճյուղի որակի ապահովման ներքին համակարգի անձնակազմը, հաջողությամբ մասնակցելով միջազգային կրթական նախագծերին, հաջողությամբ ավարտել է իր աշխատանքները Tempus ծրագրի INARM և ARARAT նախագծերում, արձանագրելով դրական արդյունքներ և ստանալով նախագծերի համակարգողների դրական գնահատականները:

Կադրային ներուժ և աշխատանքային միջավայր, նյութատեխնիկական բազա

Դիտարկվող ժամկետում գրանցվել է Մասնաճյուղի հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի աճ 1.8%-ով (դասախոսական կազմի միջին տարիքը՝ 57-ից հասել է 58-ի): Գիտական աստիճան ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը կազմել է 55.2%՝ ապահովելով Ռազմավարական ծրագրով նախանշված առնվազն 50% ցուցանիշի կատարողականը:

Հիմնական դասախոսական կազմի հաստիքները նվազել են 3.1%-ով՝ 48.5 հաստիքից (2012թ.) մինչև 47.0 (2016թ.):

Արձանագրվել է ուսանող/դասախոս հարաբերակցության հետևյալ ցուցանիշը՝ այն 2012 թվին կազմել է 8.8:1, իսկ 2016թվին՝ 11.4:1-ի (Ռազմավարական ծրագրով նախատեսված էր 12:1): Փոփոխվել է նաև ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը: 2012թվականին այն կազմել է 3.8:1, հասնելով 2016թվականին 5.1:1 –ի (Ռազմավարական ծրագրով նախատեսված էր 6:1):

Հաստիքախնայողության արդյունքում նվազել են նաև վարչատնտեսական և օժանդակ անձնակազմի հաստիքային միավորները՝ 2012թվականին կազմել է 68 հաստիք, իսկ 2016 թվականին՝ 63.75 հաստիք (6.25%):

Ֆինանսական կայունություն, ռեսուրսների կառավարում

Մասնաճյուղի արտաբյուջետային եկամուտները 2012թ. համեմատ աճել է 22%-ով: Սակայն 2015-2016թթ. կտրուկ ավելացել են բուհի կողմից ուսանողներին տրամադրված ուսման վարձի լրիվ և մասնակի փոխհատուցումները: Ռազմավարական ծրագրով նախատեսված առնվազն 7% կողմնորոշիչ ցուցանիշները կայունացման ֆոնդի համար կազմել է 7.3%: Զարգացմանն ուղղված միջոցները պլանով նախատեսված էր 2%, այս ուղղությամբ կա առաջընթաց. շնորհիվ Tempus ծրագրի նախագծերում Մասնաճյուղի մասնակցության՝ այն կազմել է 5% (Մասնաճյուղի կենսագործունեության համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների և այլ բաղկացուցիչների ձեռք բերման և նոր լաբորատորիաների, կաբինետների, համակարգչային լսարանների ստեղծում ու կահավորում): Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը պլանով նախատեսված 5 %-ի փոխարեն կատարվավ է 3.2%-ով, որի նվազ լինելը պայմանավորված է Մասնաճյուղի մասնաշենքերի վերակառուցված լինելու հանգամանքով: Ուսանողների ուսման վարձերի գեղչերը կազմել են վճարովի ուսուցումից ուսման վարձերի հաշվեգրված եկամուտների 7.1%-ը:

Ամփոփելով 2012-2016թթ. Մասնաճյուղի ռազմավարական պլանով առաջադրված խնդիրներն ու արդյունքներն՝ ըստ առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշների կատարողականի, կարելի է նշել, որ զարգացման հիմնական խնդիրները համահունչ են ֆինանսական կայունության պահպանմանը և ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Տեղեկատվական ռեսուրսներ և տեխնոլոգիաներ

2012-2016թթ. Մասնաճյուղը համալրվել է 47 նոր աշխատանքային համակարգչով՝ հասցնելով դրանց թիվը 112-ի, 5 պրոյեկտորով, 10 տպիչ սարքով, 7 երթուղիչով և այլ օժանդակ սարքավորումներով: Մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումներն ապահովված են լարային կամ անլար ինտերնետ կապով: Մասնաճյուղն արդեն ունի առանձնացված ինտերնետ կապ՝ 5 IP հասցեներով: Ուսումնական գործընթացում օգտագործվում են 91(81.25%) համակարգիչներ: Վարչական և հետազոտական նպատակներով օգտագործվում են 21(18.75%) համակարգիչներ: Բոլոր ամբիոններն ապահովված են անհատական համակարգիչներով: Մասնաճյուղի կայք-էջն է՝ <http://polytechvan.am>, էլեկտրոնային հասցեներն են seuavan@yahoo.com և seuavan@gmail.com: 2013թ.-ից ակտիվ գործում է Մասնաճյուղի ֆեյսբուքյան պաշտոնական էջը՝ ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ անունով: Ի լրումն Մասնաճյուղում գործող տեխնոլոգիական կարողություններով լսարանների, ժամանակակից սարքավորումներով և 5 հզոր համակարգիչներով հագեցած «Մեքենագիտության և էլեկտրատեխնիկայի» լաբորատորիայի, արդեն գործարկվել է տեսակոնֆերանսների բազմաֆունկցիոնալ սարքը:

Հետազոտական ներուժ և գիտություն

Մասնաճյուղում նախորդ հնգամյակում պաշտպանվել են 5 ատենախոսություններ, այդ թվում 2 դոկտորական:

«Մեքենաշինություն և մետալուրգիա» ամբիոնում կատարվել են «Արգելակային հանգույցների շփագույգների աշխատունակության հետազոտումը» գիտահետազոտական աշխատանքները: «Շփագիտության բազային գիտահետազոտական լաբորատորիայի» 2015թ. նախատեսված աշխատանքների շրջանակում իրականացվել են «Մարդատար ավտոմեքենաների արգելակային կոճղակների արտադրության հիմնում» ներդրումային ծրագիր, որը ֆինանսավորվումը կատարվել է ՀԱՊՀ գիտական խորհրդի կոմիտեի հատկացված գումարներից: Ստացվել են փորձանմուշներ և որոշվել են նրանց շահագործողական հատկությունները:

Նյութերի նուրբ և գերնուրբ մանրացման և տարբեր կոմպոզիցիոն նյութերի և շինանյութերի ստացման գործընթացների ուսումնասիրության շրջանակներում ստացվել են բարելավված հատկություններով շինվածքներ: Հետազոտությունների իրականացման նպատակով համատեղ գործընկեր կազմակերպության հետ միասին նախագծվել և պատրաստվել է նոր գիտաարտադրական թրթռաղաց:

Հաշվետու ժամանակաշրջանում լրամշակվել են մագիստրատուրայում՝ որպես բարձրագույն կրթության 2-րդ աստիճանում, մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների ուսումնական պլանները:

Նախորդ հինգ տարիների ընթացքում աճել է ասպիրանտուրա ընդունվածների թիվը: Ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում սովորողների ընդհանուր թիվը հաշվետու ժամանակահատվածում կազմել է՝ 1 ասպիրանտ և 2 հայցորդ:

Դիտարկվող ժամանակահատվածում Մասնաճյուղում ստեղծվել են 2 նոր գիտահետազոտական լաբորատորիաներ:

Աճել է նաև հետազոտական նախագծերում Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցչությունը: Նախագծերում ներգրավվածների թիվը 4-ն է:

Խիստ կարևորվել են գիտական հետազոտությունների կիրառական արդյունավետության բարձրացման ու արդյունքների առևտրայնացման խնդիրները:

Ընդլայնվել է Մասնաճյուղում հրատարակված հոդվածների հանդեսների ցանկը: Կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ մագիստրատուրայում և բակալավրիատում սովորող ուսանողների մասնակցությամբ: Մասնաճյուղում գիտական սեմինարների անցկացումը կրում է ամենամսյա, շարունակական բնույթ, աճել է մասնակցությունը համահամալսարանական «Պոլիտեխնիկական ընթերցումներին»:

Մասնաճյուղի գիտական ներուժի զարգացման, դասախոսների և ուսանողների ավելի լայն ներգրավման, հետազոտությունների կիրառական ուղղվածության խթանման, դրանց արդյունավետության և ինովացիոն մրցունակության բարձրացման և հատկապես, ստացված արդյունքների առևտրայնացման խնդիրները մնում են Մասնաճյուղի զարգացման մոտակա կարևորագույն ռազմավարական խնդիրների շարքում՝ որպես ինժեներական գիտության և Մասնաճյուղի ընդհանուր հզորացման ու ֆինանսական ներհույսերի ձևավորման լավագույն գրավականներ:

Արտաքին կապեր և գործունեության միջազգայնացում

2010թ. նոյեմբերից Մասնաճյուղը ընդգրկված է Tempus ծրագրի Եվրոպական կրթական համագործակցության երկու նախագծերում.

- Development and Integration of University Self-Assessment Systems (DIUSAS) – Համալսարանի ինքնագնահատման համակարգերի զարգացում և ինտեգրում,
- Promoting Internationalization and Comparability of Quality Assurance in Higher Education (PICQA) - Բարձրագույն կրթության որակի ապահովման համադրելիության և միջազգայնացման աջակցություն: 2012թ. հաջողությամբ իրականացվել են 2 նոր ծրագրեր.
- ARARAT (Armenian Coordination Agency “University Employer”) - Հայկական կոորդինացիոն գործակալություն «Համալսարան- գործատու»,
- INARM (Informatics and Management: Bologna Style Qualifications Frameworks) - Ինֆորմատիկա և կառավարում. Բոլոնիայի ոճի որակավորումների շրջանակ:

Պետք է նշել, որ շնորհիվ Tempus-ի նախագծերի, բացի ծրագրային թիրախային նպատակներից, նոր կապեր ստեղծելու հնարավորություն է ընձեռնվել համագործակցային կոնսորցիումի անդամ մեծ թվով Եվրոպական, ԱՊՀ և ՀՀ համալսարաններից ու այլ գործընկեր կազմակերպություններից յուրաքանչյուրի հետ: Մասնաճյուղի աշխատակիցներից մեկը, միաժամանակ ընդգրկվել է ՀԱՊՀ-ի կողմից իրագործվող նմանատիպ մեկ այլ Tempus-ի DESIRE նախագծում, մեկ այլ աշխատակից ընդգրկված է Tempus-ի MATHGEAR նախագծում:

2015-2016 ուսումնական տարում ունեցել ենք արտասահմանում սովորող մեկ ուսանող, ով կրկնակի դիպլոմի ծրագրով գերազանցությամբ ավարտել է ուսումը նաև Պորտուգալիայի Բրագանսա համալսարանում և ընդունվել առկա ասպիրանտուրա:

ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հանրությանն են մատուցվում անդրադարձեր, որոնք վերաբերել են Մասնաճյուղի գործունեության տարաբնույթ ուղղություններին՝ ընդունելություն, միջազգային ծրագրեր, ուսանողական գիտաժողով, պետական քննություններ և ավարտական աշխատանքների պաշտպանություններ, պոստենցիալ դիմորդների համար մասնագիտական կոմիտեի ֆիլմեր, ուսանողների կողմից նկարահանված գովազդային տեսահոլովակ:

Համալրվել է գործատու կազմակերպությունների հետ Մասնաճյուղի կնքած պայմանագրերի թիվը:

Մասնաճյուղում գործում է տարբեր ընկերություններում պրակտիկաների կազմակերպման 40 պայմանագիր, ինչպես նաև կնքվել են 15 պայմանագրեր դպրոցների և 10 քոլեջների հետ:

Մասնաճյուղում, ի հավելումն մի շարք գործընթացների, նախապես մշակված հարցաթերթիկներով իրականացվել են 4 թիրախային խմբերի (ուսանող, շրջանավարտ, դասախոս, գործատու) էլեկտրոնային հարցումներ, որոնց նպատակն է աշխատաշուկայի համալիր կարիքների վեր հանումն ու բուհի ուսումնական ծրագրերը (կրթական վերջնարդյունքները) թարմացնելը, ինչպես նաև՝ որակավորման ոլորտային շրջանակի մշակումը, ինչը նոր մշակույթ է ՀՀ բարձրագույն կրթական տարածքում:

Ամփոփելով ՀՊՃՀ ՎՄ 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքները, գալիք հնգամյակի համար որպես Մասնաճյուղի հետագա զարգացման ռազմավարական հիմնական թիրախներ, առաջադրվում են հետևյալները.

- երաշխավորված ընդունելություն և ուսանողական համակազմ,
- ուսուցման աճող որակ և արդյունավետություն,

- մայր բուհի կազմում ինտեգրում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին,
- որակյալ կադրային ներուժ և նյութատեխնիկական բազա,
- սոցիալական ծրագրեր և ինֆրակառուցվածք,
- կայուն ֆինանսներ և արդյունավետ ու թափանցիկ կառավարում,
- նպատակաուղղված գիտություն և նորաստեղծություն,
- տեղեկատվական համալիր ապահովվածություն,
- զարգացող արտաքին կապեր և գործունեության միջազգայնացում:

Թվարկված թիրախային գերակայությունները հիմք են ծառայել ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի 2017-2021թթ. Ռազմավարական ծրագրի ներքոշարադրյալ նպատակների, խնդիրների և դրանց իրագործման ուղղությունների ձևավորման և առաջադրման համար:

**ՀԱՊՇ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ն Պ Ա Տ Ա Կ 1

**ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԼԻԱՐԺԵՔ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

Մասնաճյուղը պետք է ձգտի պահպանել իր ուսանողական համակազմը՝ հանրակրթական դպրոցների տարեցտարի նվազող (հատկապես 2018թ.) շրջանավարտների թվի և կրթության շուկայի տարեցտարի ուժեղացող հարափոփոխ և կողմնորոշիչ ազդեցության պայմաններում: Մասնաճյուղը եղել և մնում է մարզի ճարտարագիտական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների վերարտադրության և զարգացման հիմնական աղբյուրը: Ընդունելության պրոֆիլի լավարկումը և մուտքի համապատասխանեցումը հանրապետության և մարզի տնտեսական զարգացման կարիքներին և աշխատուժի շուկայի պահանջմունքներին՝ Մասնաճյուղում պետք է կրի շարունակական բնույթ: Համապատասխանաբար, կարևորվում են դիմորդների կայուն հոսքի ապահովումը և ուսումնառության այլընտրանքային հնարավորությունների ստեղծումը տարբեր կրթական ծրագրերի գծով: Անհրաժեշտ է ավելացնել դիմորդների սեփական հոսքը մինչբուհական նախապատրաստական համակարգի խողովակով, հենվելով Մասնաճյուղի ավագ դպրոցի, մարզի այլ դպրոցների և քոլեջների ցանցի վրա:

ԽՆԴԻՐ 1.1. Համապատասխանեցնել առաջարկվող ուսումնական մասնագիտությունների, կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի տեսականին և ընդունելության պլանավորումը (ներքին համամասնությունները) աշխարհաշուկայի պահանջարկին:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- ՀՀ մասնագիտությունների անվանացանկի շրջանակներում, ձևավորել Մասնաճյուղի մոտակա տարիների ընդունելության խոշորացված մասնագիտությունների իրատեսական ցանկ:
- Սահմանել օպտիմալ համամասնություններ կրթական ծրագրերի և դրանց բաղկացուցիչ մասնագիտությունների ընդունելության պլանային չափաքանակների միջև՝ հաշվի առնելով կրթության շուկայի միտումները, նպատակ ունենալով պահպանել ընդհանուր համակազմը:
- Զարգացնել և մեծացնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից բարձր առաջադիմությամբ և ուսուցումը բակալավրի ծրագրով երկրորդ կուրսում շարունակելու իրավունքով մասնաճյուղ դիմող անձանց հոսքը՝ համագործակցելով այդ հարցում տարածաշրջանի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ:
- Ընդլայնել ՀՀ և արտասահմանյան առաջատար բուհերի հետ ունեցած համագործացության շրջանակները՝ համատեղ կրթական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ:
- Շարունակել ընդունելության գործընթացի շրջանակներում բուհի դիմորդների համար «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաներից անվճար դասընթացների կազմակերպումը:

ԽՆԴԻՐ 1.2. Բարելավել առաջարկվող կրթական ծրագրերի մարքեթինգն ու արտաքին գրավչությունը, ուժեղացնել կապը դպրոցների, քոլեջների և գործատուների հետ և ընդունելության գովազդը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ընդլայնել և ակտիվացնել Համալսարանի և Մասնաճյուղի ընդունելության գովազդը տարածաշրջանի դպրոցներում՝ աշխատանքները սկսելով տվյալ ուսումնական տարվա սկզբին, տնօրենի ղեկավարությամբ գործող համապատասխան ստորաբաժանման միջոցով, առավելագույնս ներգրավելով գովազդային գործընթացում ամբիոններն ու ֆակուլտետները, ուսանողական և շրջանավարտների կառույցները, ինչպես նաև մարզի հիմնական գործատուներին: Կատարելագործել առաջարկվող ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգը, ապահովել անհրաժեշտ տեղեկատվության տարբեր ձևերի մատչելիությունը: Ապագա դիմորդների համար կազմակերպել առարկայական օլիմպիադաներ և սեմինարներ, անվճար նախապատրաստական դասընթացներ, բաց դռների օրեր:
- Ընդլայնել փոխշահավետ գործակցային կապերը հիմնական դոնոր դպրոցների հետ՝ մատուցելով անվճար խորհրդատվություն դիմորդների համար:
- Նպաստել Մասնաճյուղի ավագ դպրոցի հետագա զարգացմանը, շրջանավարտների մասնագիտական կողմնորոշմանը և ներհոսքին Համալսարան ու Մասնաճյուղ:
- Զարգացնել փոխշահավետ համագործակցությունը տարածաշրջանային քոլեջների հետ:

ԽՆԴԻՐ 1.3. Աշխատուժի տարածաշրջանային շուկայի պահանջմունքներին համահունչ՝ առավելագույնս զարգացնել լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը՝ դիֆարկելով այն որպես Մասնաճյուղի ուսանողական կայուն համակազմի պահպանմանը նպաստող ռեսուրս:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Համակողմանիորեն զարգացնել ուսանողների կարիերայի նախապատրաստման գործընթացը, աշխատատեղերի որոնման աջակցության, մասնագիտական կողմնորոշման ծառայությունները, համագործակցելով Լոռու մարզի զբաղվածության կենտրոնի հետ:
- Նպաստել և խրախուսել Մասնաճյուղի նախաձեռնություններն ուղղված առանձին ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ աշխատակիցների նպատակային վերապատրաստմանը, պայմանագրային կապերի ընդլայնմանը:
- Ապահովել լրացուցիչ և շարունակական կրթության մատչելիությունը հանրության ամենալայն շերտերի համար՝ նախաձեռնելով և խրախուսելով հեռավար ուսուցման նոր տեխնոլոգիաների յուրացումն ու կիրառությունը ուսումնառության տարբեր ծրագրերում:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Կրթական բոլոր աստիճաններում մասնագիտությունների ճշգրտված ցանկ և տարեկան ընդունելության կայունացված չափաքանակներ՝ մինչև 2021թ.:

- Մարզի առնվազն 30 դպրոցների հետ համագործակցության պայմանագրերի կնքում:
- Մասնաճյուղի տարեկան ընդունելության ընդհանուր ծավալը բարձրագույն կրթության բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերով՝ առնվազն 150:
- Ընդունելության տարեկան ընդհանուր ծավալը մինչբուհական կրթության ծրագրերով՝ առնվազն 50:
- Ընդունելության տարեկան ընդհանուր ծավալը շարունակական կրթության ծրագրերով՝ 10:
- Մասնաճյուղի ուսումնառողների համակազմը հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով պահպանել առնվազն 750, այդ թվում՝ հանրակրթական ծրագրով՝ 150, բակալավրի ծրագրով (առկա և հեռակա)՝ 570, մագիստրոսի ծրագրով (առկա և հեռակա)՝ 30:
- Մասնաճյուղում մագիստրոսական ծրագրերով սովորողների մասնաբաժինը ուսանողական ընդհանուր համակազմում՝ առնվազն 5%:
- Ընդունելության աջակցման և մարքեթինգի շուրջտարյա գործող մասնաճյուղային կառույց:

Ն Պ Ա Տ Ա Կ 2

ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԷԱՊԵՍ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԸ՝ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ

ԽՆԴԻՐ 2.1. Որակի գնահատման և ապահովման ներմասնաճյուղային համակարգի շրջանակներում զարգացնել և կատարելագործել որակի ներքին գնահատման համակարգը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Առաջնորդվելով ՀԱՊՀ ստրատեգիական պլանով, Մասնաճյուղում կատարել կառուցվածքային միավորների, կառավարման կառույցների պարտականությունների և գործառույթների հստակ կատարման մշտադիտարկում:
- Կիրառել Մասնաճյուղում գործող մեխանիզմները և չափանիշները՝ կրթական ծրագրերի բովանդակության, կադրային-ռեսուրսային ապահովվածության և ուսուցման արդյունքների ինքնավերլուծության, ներքին գնահատման ու հետագա մոնիթորինգի նպատակով:
- Կատարել Մասնաճյուղում իրականացվող (այդ թվում նաև Մասնաճյուղում ստեղծված) կրթական ծրագրերի և դրանք իրացնող հիմնական ուսումնական ստորաբաժանումների գործունեության վերլուծություն և որակի գնահատման ներմասնաճյուղային համակարգից բխող փուլային գործընթացներ՝ մշակված համակարգի կիրառմամբ:
- Որակի ներքին գնահատման արդյունքների հիման վրա պլանավորել և իրականացնել ուսուցման որակի բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումներ:
- Մշտապես կատարելագործել ուսանողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման մշտադիտարկման համակարգերը և գործընթացները՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքների և ուսուցման արդյունավետության գնահատման որակը և հավաստիությունը:
- Ապահովել որակի գնահատման չափանիշների ու գործընթացների թափանցիկությունը և ընթացիկ արդյունքների հրապարակայնացումը տարածաշրջանում:

- Շարունակել և կատարելագործել Մասնաճյուղում դասավանդման և ուսումնառության որակի միասնական չափանիշների համապատասխանեցման գործընթացը ՀԱՊՀ-ի չափանիշներին:

ԽՆԴԻՐ 2.2. *Մասնակցել ՀԱՊՀ կրթական ծրագրերի բովանդակային վերանայման և նոր ծրագրերի ներմուծման գործընթացին՝ ուղենիշ ունենալով հետազոտական բաղադրիչի աստիճանական ներմուծումը և շրջանավարտների ծառայունակությունն ապահովող կոմպերենցիաների ձևավորումը և հավաստումը:*

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ապահովել ուսանողների, դասախոսների և ուսումնական վարչակազմի իրազեկվածությունը կրթական ծրագրերի՝ ըստ վերջնարդյունքների ձևավորման չափանիշների և կրեդիտային համակարգի կիրառմանն ուղղված փաթեթների վերաբերյալ:
- Մասնակցել ՀԱՊՀ-ում շարունակվող կրթական ծրագրերի, մասնագիտությունների միավորման և խոշորացման գործընթացին:
- Ելնելով որակական բնութագրիչներից և հիմքում ունենալով ուսումնական պլանների ճկուն մոդուլային կառուցվածքը և բակալավրի կրթական ծրագրում խիստ միասնականացված ընդհանուր կրթական կառուցամասը՝ դյուրացնել ուսանողների միջմասնագիտական տեղափոխումները երկամյա ուսուցման արդյունքների հիման վրա:
- Շարունակել Մասնաճյուղի կրթական ծրագրերի հումանիտար-տնտեսագիտական և բնապահպանական բաղադրիչների արդիականացման գործընթացը՝ նպատակաուղղելով դրանք ուսանողների հումանիտար-իրավական մշակույթի, ձեռներեցության և կառավարման ձիրքերի զարգացմանը:
- Շարունակել շրջանավարտների կրթական վերջնարդյունքների գործնական պատրաստականության բաղադրիչների բարելավումը, բազմազանեցնելով և առավելապես արդյունավետ դարձնելով արտադրական պրակտիկան, ընդլայնելով «բուհ-գործատու» պայմանագրային կապերը, զարգացնելով շահառու կազմակերպություններում Մասնաճյուղի գործունեության հաջողված փորձը, ընդլայնելով պատվիրատու կազմակերպություններում ավարտական կուրսերի ուսանողների ուսուցմանը համատեղված արտադրական փորձառության ձեռք բերման հնարավորությունները: Արդյունավետ օգտագործել բացառիկ տեխնոլոգիական հնարավորություններով «Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաներ» (ՀԱՃԼ - ANEL) գերժամանակակից ուսումնահետազոտական կենտրոնի, ինչպես նաև նորաստեղծ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի կողմից տրամադրվող բոլոր հնարավորությունները:
- Ծրագրային վերափոխման և փորձաքննության գործընթացներում առավելագույնս ներգրավել մասնագիտությունների հիմնական պատվիրատու (գործատու) կազմակերպություններին, դիպլոմային աշխատանքների պետական հանձնաժողովներում ընդգրկել գործատու ձեռնարկությունների առաջատար մասնագետներին՝ շրջանավարտների կարիերայի լավագույն պլանավորման և հետագա աշխատանքի տեղավորման նկատառումներից ելնելով:
- Շարունակել և կատարելագործել կրթական ծրագրերից և Մասնաճյուղի շրջանավարտներից գործատուների բավարարվածության վերաբերյալ պարբերական մշտադիտարկումը՝ մնայուն

հետադարձ կապի կատարելագործման նպատակով: Արդյունավետ օգտագործել ՀԱՊՀ հետ հեռահար կապի առկայությունը և Մասնաճյուղի ներգրավվածությունը համահամալսարական գործիքակազմի կիրառման գործընթացում:

ԽՆԴԻՐ 2.3. Կատարելագործել Մասնաճյուղում ներդրված կրեդիտային համակարգը՝ ընդլայնելով վերջինիս ընձեռած հնարավորությունների օգտագործման շրջանակը և բարձրացնել դրա կիրառման արդյունավետությունը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Շարունակել ծրագրված անցում Մասնաճյուղի մասնագիտությունների կրեդիտային հենքով ձևավորված ճկուն ուսումնական ծրագրերի՝ կրթական վերջնարդյունքների արժևորմամբ պայմանավորված մեթոդաբանության պահանջներին համահունչ:
- Ծրագրային վերակառուցման ընթացքում շարունակել գործընթացը՝ ուսանողների լսարանային և ինքնուրույն աշխատանքի ժամաքանակների միջև իրատեսական հարաբերակցություններին հասնելու ուղղությամբ, կարևորելով ինքնուրույն աշխատանքի դերը և ուսումնառության արդյունավետությունը: Ինքնուրույն աշխատանքներում ձգտել կիրառական խնդիրների մասնաբաժնի էական աճին:
- Զարգացնել կրեդիտային համակարգի կիրառման արդյունավետության բարձրացմանը ուղղված առկա մեթոդական, չափորոշիչ և տեղեկատվական նյութերի փաթեթները:
- Կարևորել ուսանողների և մագիստրանտների մասնակցությունն իրենց անհատական ուսումնառության գործընթացի պլանավորմանը, բարձրացնել գիտական ղեկավարների և խորհրդատուների համակարգող դերն ու պատասխանատվությունն այս ուղղությամբ:
- Մասնաճյուղում ներդնել դասընթացներին ուսանողների գրանցման և ուսումնական առաջադիմության տվյալների կառավարման էլեկտրոնային համակարգը, ապահովելով առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրում և մշակում:
- Նպաստել Մասնաճյուղի ավելի լայն ընդգրկմանը եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ուսանողների և շրջանավարտների շարժունությանը:

ԽՆԴԻՐ 2.4. Բարձրացնել ուսուցման և դասավանդման արդյունավետությունը՝ նոր տեխնոլոգիաների և ժամանակակից ուսանողակենտրոն մանկավարժական մեթոդների կիրառման կատարելագործմամբ՝ ուսումնառության որակի և արդյունավետության շարունակական բարձրացման նպատակով:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Զարգացնել գիտելիքների գնահատման համակարգերը՝ ելնելով ուսումնառության որակի և ուսանողների շահագրգռվածությունը խթանելու տեսակետից:
- Մշտապես գնահատել և բարձրացնել ուսանողների բավարարվածությունը կրթական գործընթացից, ՀԱՊՀ հետ զուգահեռ իրականացնել ուսուցման տարբեր բաղադրիչներից բավարարվածության ամենամյա փուլային միջոցառումներ(հարցումներ, «կլոր սեղաններ» և այլն)՝ ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցությամբ:

- Կատարելագործել որակյալ ուսումնառությանը նպաստող օժանդակ ուսանողական ծառայությունները, բարելավել ուսանողների և դասախոսների համագործակցությունը և կոնտակտների մատչելիությունը ուսումնական գործընթացում: Լիովին ներդնել «ամպային» հարթակները կրթական գործընթացի բոլոր օղակներում, ապահովելով «դասախոս-ուսանող» հուսալի համագործակցության կատարյալ թափանցիկություն և արդյունավետություն:
- Բարձրացնել լեզվական և համակարգչային ուսուցման դասավանդման որակը և արդյունավետությունը կրթական բոլոր ծրագրերում, կատարելագործել «Անգլիախոսների ակումբ»-ի աշխատանքը՝ ընդլայնելով դրանում օտարերկրյա մասնագետների մասնակցությունը: Օգտագործել Մասնաճյուղում գործող հեռահար ուսուցման հնարավորությունները:
- Շարունակել ուսումնական ինֆրակառուցվածքի հետագա բարելավումն ու արդիականացումը, որակյալ դասավանդման տեխնիկական և մեթոդական ռեսուրսների, այդ թվում՝ տեխնոլոգիական կարողությամբ լսարանների ցանցի ընդլայնումը:
- Ապահովել Մասնաճյուղի մասնակցությունը շարունակաբար կատարելագործվող ՀԱՊՀ որակի ապահովման էլեկտրոնային առցանց համակարգում (ՈԱԷԱՀ)՝ արդյունավետ օգտագործելով դրա գործառնության իմնական հնարավորությունները:

ԽՆԴԻՐ 2.5. Ապահովել Մասնաճյուղի մասնակցությունը կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համալսարանական գործընթացներին:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ունենալով ինստիտուցիոնալ հավատարմագրման դրական փորձ, ինչպես նաև Tempus-ի DIUSAS և PICQA միջազգային նախագծերում ձևավորված հմտությունները, լրամշակել Մասնաճյուղի գործունեության կրթական ոլորտների առկա չափանիշների ինքնագնահատման գործիքակազմը՝ հիմք ընդունելով եվրոպական հավատարմագրող կազմակերպությունների և ՄԿ ՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափանիշները:
- Իրականացնել Մասնաճյուղի ստորաբաժանումների գործունեության՝ նախկինում իրականացված ինքնավերլուծության արդյունքում մշակված միջոցառումների պլանների և կողմնորոշիչ ցուցանիշների կատարողականների համադրական վերլուծություն և գնահատել արդյունքները ՄԿ ՈԱԱԿի սահմանած չափանիշների տեսանկյունից:
- Ելնելով Մասնաճյուղի գործունեության ինքնագնահատման և կրթական ծրագրերի վերլուծության և որակի գնահատման գործընթացների արդյունքներից, ապահովել Մասնաճյուղի՝ ՀԱՊՀ կազմում, պատշաճ մասնակցությունը արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթացին:
- ՀԱՊՀ-ի հետ համաձայնեցված ստեղծել կրթական ծրագրերի հետագա բարեփոխման և որակի շարունակական բարձրացման պլան-ժամանակացույց, հիմնվելով արտաքին գնահատման արդյունքների վրա:
- Ապահովել ուսուցման որակի գնահատման և կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշների ու գործընթացների թափանցիկությունը և արդյունքների հրապարակայնությունը Մասնաճյուղի ներքին և

արտաքին շահակիցների համար, ակտիվորեն ներգրավելով վերջիններիս որպես հավատարագրման գործընթացի ակտիվ մասնակիցների:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Մասնաճյուղի որակի գնահատման և ապահովման գործող համակարգ՝ ամենամյա կատարելագործումով՝ 2019թ.:
- Դասախոսների կատարելագործման՝ Համալսարանի շարունակական կրթության կառույցի խողովակով իրականացվող կրեդիտահենք համակարգ՝ սկսած 2017-2018 ուստարվանից:
- Մասնաճյուղի ամբիոնների և դասախոսական կազմի գործունեության ամենամյա գնահատման գործող ներքին համակարգ՝ սկսած 2017-2018 ուստարվանից:
- Ուսուցման որակի ամենամյա մշտադիտարկում և դրա արդյունքների հրապարակում՝ սկսած 2017-2018 ուստարվանից:
- Մասնաճյուղում քննաշրջանների ընթացիկ մշտադիտարկում՝ տարեկան 2 անգամ:
- Մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների՝ կրթական գործընթացից բավարարվածության պարբերական ուսումնասիրություններ՝ տարեկան 1 անգամ:
- Կրթական բոլոր ծրագրերի (մասնագիտությունների) որակավորման բնութագրիչների առկայություն՝ 2017-2018 ուստարվանից:
- Մասնաճյուղի ստորաբաժանումներում «ամպային» հարթակի լրիվ ներդրում՝ 2018-2019 ուստարի:
- Համալսարանի հետ զուգահեռ՝ հերթական ինքնավերլուծություն (ներքին աուդիտ) և Մասնաճյուղի մասնակցություն Համալսարանի վերահավատարմագրման գործընթացին՝ 2019թ.:

Ն Պ Ա Տ Ա Կ 3

ՎԵՐԱՎԱՌՈՒՑԵԼ ԵՎ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ, ՍՏԵՂԾԵԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ապահովել Մասնաճյուղի գիտական ներուժի կայուն զարգացումը, հեղազոտական ծրագրերի արդյունավետության բարձրացումը և դրանց ինովացիոն կողմնորոշումն ապահովող պայմանների ստեղծումը:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղը, լինելով Լոռու մարզի տեխնոլոգիական առաջատար բուհը, պարտավորություն ունի աջակցելու Լոռու մարզի արդյունաբերական ձեռնարկությունների տնտեսական զարգացմանն հետազոտական ծրագրերի իրականացման և մասնագիտական խորհրդատվության ապահովման հարցերում:

Մասնաճյուղի գիտական ներուժի արդյունավետության բարելավման և զարգացման տեսանկյունից կարևոր է Մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական կազմի ներգրավվածությունը հետազոտական և

նորարարական աշխատանքներում և գիտական նոր կադրերի նպատակային պատրաստման գործընթացում, գիտատեխնոլոգիական համագործակցության ընդլայնումը ՀԱՊՀ Երևանյան Կրթահամալիրի ամբիոնների և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ:

ԽՆԴԻՐ 3.1. Ապահովել Մասնաճյուղի գիտական ներուժի կայուն զարգացումը՝ Համալսարանի ասպիրանտուրայի և հայցորդական ինստիտուտի հնարավորությունների օգտագործման արդյունավետության բարձրացման և Երևանյան Կրթահամալիրի ամբիոնների գիտամանկավարժական ներուժի արդյունավետ օգտագործման ճանապարհով:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ատենախոսական հետազոտությունները համարել Մասնաճյուղի հետազոտական աշխատանքների կարևորագույն բաղադրամաս: Ապահովել ատենախոսությունների թեմատիկայի կապը Համալսարանում և Մասնաճյուղում իրականացվող հետազոտական նախագծերի և մարզի արդյունաբերական ձեռնարկությունների առջև կանգնած հիմնախնդիրների, մասնավորապես՝ նոր նախագծերի և մրցունակ արտադրատեսակների ստեղծման հետ:
- Համարել հետազոտական աշխատանքներին մասնակցությունը և արդյունքները, ինչպես նաև մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարությունը՝ դասախոսական կազմի գնահատման կարևոր ցուցանիշ և դասախոսների հետազոտական գործունեության արդյունավետության գնահատման արդյունքները հաշվի առնել դասախոսների առաջընթացի և պայմանագրերի կնքման գործընթացներում:
- Զարգացնել պայմանագրային հարաբերությունները հայրենական, մարզային պատվիրատու կազմակերպությունների հետ՝ մասնակից դարձնելով նրանց իրենց սեփական կադրերի պատրաստման համար անհրաժեշտ ռեսուրսների ձևավորման գործընթացին:
- Կատարելագործել «մասնաճյուղ-արդյունաբերություն» փոխկապակցության գործուն համակարգը, իրականացնել մասնագետների, գիտատեխնիկական և կրթական ծառայությունների շուկայական պահանջարկի համատեղ կանխատեսումներ և մոնիթորինգ, ձևավորել տեխնոլոգիական տրանսֆերի մեխանիզմներ:
- Խթանել մագիստրանտների ակադեմիական շարժունությունը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում, ստեղծել կամ մասնակցել համատեղ մագիստրոսական ծրագրերի:
- Մասնաճյուղի զարգացման ծրագրերի մշակմանն ու իրագործման մեջ շարունակել ապահովել գործընկեր կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը:
- Մասնաճյուղի դասախոսներին, մագիստրոսներին և ուսանողներին ներգրավել գիտահետազոտական ծրագրերում ու ամբիոնների հետազոտական աշխատանքներում, կազմակերպել գիտական սեմինարներ և գիտաժողովներ:

ԽՆԴԻՐ 3.2. Ապահովել Մասնաճյուղի մասնակցությունը ֆինանսավորվող հեղափոխական ծրագրերի հայրերի ներկայացմանը, գիտահեղափոխական աշխատանքների ծավալի աճի ու արդյունավետության բարձրացման, փորձարարական բազայի ու ինֆորմացիոն ապահովման զարգացման ու բարելավման նպատակով:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ապահովել Մասնաճյուղի մասնակցությունը մարզի նպատակային, բազային, պետքուջետային և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի նախագծերի ֆինանսավորման համակարգերում: Բարձրացնել գիտական ներուժի օգտագործման արդյունավետությունը Մասնաճյուղի հետազոտական գործընթացներում: Մեծացնել նախագծերի արտաբյուջետային ֆինանսավորման ծավալը Մասնաճյուղի գիտական բյուջեում, մասնավորապես գործընկեր ձեռնարկությունների ներդրումները արդյունաբերական ուղղվածությամբ հետազոտական նախագծերում:
- Մեծացնել գործընկեր ձեռնարկությունների հետ արդյունաբերական հետազոտությունների ծավալն ու հաշվեկշիռը:
- Ինովացիոն կողմնորոշմամբ մրցունակ գիտություն ունենալու համար առաջիկա հնգամյակում Մասնաճյուղի փորձարարական-փորձագիտական և տեխնոլոգիական հետազոտությունների հարթակ կարող է հանդիսանալ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, որը կնպաստի նորարարական արդյունքների ստացման և հետագայում առևտրայնացման ու ներդրման համար:
- Ակտիվացնել մասնակցությունը Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի կողմից հայտարարված մրցույթներին, գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման նոր աղբյուրներ ստանալու, Մասնաճյուղի գիտական ենթակառուցվածքների կատարելագործման համար:

ԽՆԴԻՐ 3.3. Ստեղծել նպաստավոր պայմաններ հետազոտությունների ծավալի մեծացման, կիրառական կողմնորոշման և դասախոսական կազմի ներգրավման համար:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Առավելագույնս ապահովել ՀԱՊՀ-ի և Մասնաճյուղի գիտահետազոտական ոլորտի նյութատեխնիկական ու գիտատեղեկատվական բազայի և ենթակառուցվածքների հասանելիությունը Մասնաճյուղում իրականացվող հետազոտողների համար:
- Կիրառել ուսումնառության և դասավանդման արդյունավետ մեթոդներ, ինչպիսիք են կարճաժամկետ ինտենսիվ դասախոսությունները (այդ թվում՝ հրավիրված մասնագետների կողմից), սեմինարներն ու քննարկումները, աշխատաժողովները՝ նախապատվությունը տալով դասավանդման փոխներգործուն մեթոդներին:
- Աջակցել Մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի, մագիստրանտների և ասպիրանտների ընդգրկմանը տարբեր միջազգային գիտական նախագծերում, ապահովել անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն նախագծերի ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնմանը և հայտերի մշակմանը:
- Ստեղծել ուսանողների գիտական ներուժի իրականացման պայմաններ, ապահովել առավել տաղանդավոր ուսանողներին գիտական և դասախոսական գործունեությանը նախապատրաստելու պայմաններ, ստեղծել շնորհալի ուսանողներին բարոյական ու նյութական խրախուսման համակարգ:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Մասնաճյուղի հետազոտական նախագծերին մասնակցությունը 2021 թվին առնվազն՝

- գիտամանկավարժական կազմի 30%-ը,
- մագիստրանտների՝ 10%:
- Մասնաճյուղի հետազոտական նախագծերի ծավալը 2021 թվին առնվազն՝
 - գիտության արտաբյուջետային ֆինանսավորման ծավալի աճ՝ 10%,
 - պետբյուջեով նախատեսված հետազոտական աշխատանքների ծավալի աճ՝ 10% :
- Մասնաճյուղի ամբիոններում գործող ամենամյա գիտական սեմինարներ:
- Հնգամյա կտրվածքով մեկ դասախոսին ընկնող հոդվածների և ղեկավարած ուսանողական գիտական աշխատանքների թիվը՝ առնվազն 3, զեկուցումների թիվը՝ առնվազն 3:
- Նոր հետազոտական լաբորատորիա՝ առնվազն 1:
- Գործընկեր ձեռնարկությունների թիվը (կնքված պայմանագրերով)՝ առնվազն 50:

Ն Պ Ա Տ Ա Կ 4

ՎԵՐԱՆԱՅԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՊԱՍԵԼՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

ԽՆԴԻՐ 4.1. Կատարելագործել Մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը՝ նրա զարգացման ռազմավարական նպատակներին համապատասխան:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Արդիականացնել և կատարելագործել Մասնաճյուղի գործունեության կառավարման համակարգը, բարձրացնել դրա արդյունավետության որակը:
- Իրականացնել Մասնաճյուղի անցումը կատարելագործված կառուցվածքի՝ համադրելով տարածքային ստորաբաժանման և ինստիտուտային կառուցվածքի հնարավորությունները:
- Նախապատրաստել և իրականացնել ամբիոնների, սպասարկող ստորաբաժանումների օպտիմալացման նպատակով անհրաժեշտ վերակազմավորումներ՝ հստակեցնելով յուրաքանչյուր կառույցի գործառույթները:

ԽՆԴԻՐ 4.2. Արդիականացնել Մասնաճյուղի կառավարման համակարգը և արդյունավետությունը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Բարելավել կառավարման համակարգի տեղեկատվական ապահովումը, ապահովել Մասնաճյուղի գործունեության տարբեր ձևերի տեղեկատվական բազաների փոխազդեցությունը:
- Ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ, ապահովելով արդյունավետ և թափանցիկ կառավարում Մասնաճյուղի վարչական և կառավարչական օղակների միջև:
- Ապահովել տեխնոլոգիապես հագեցած, ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր:

ԽՆԴԻՐ 4.3. Մասնաճյուղի նոր կառուցվածքի շրջանակներում ընդլայնել ուսանողական ինքնավարության գործընթացը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Զարգացնել ուսանողական ինքնավարությունը Մասնաճյուղում, ընդլայնելով և խորացնելով ուսանողների մասնակցությունը Մասնաճյուղի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում: Աջակցել Մասնաճյուղի ուսանողական խորհրդի արտաքին կապերի զարգացմանը:
- Նպաստել ուսանողական ինքնավարության մարմինների և Համալսարանի վարչակառավարչական կազմի ու արհեստակցական միության միջև կառուցողական համագործակցության հետագա զարգացմանն ու խորացմանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Մասնաճյուղի կազմակերպական կատարելագործված կառուցվածք՝ նրա զարգացման ռազմավարական նպատակներին համապատասխան:
- ՀԱՊՀ կառավարման գործընթացների ապակենտրոնացման պայմաններում Մասնաճյուղային մակարդակի գործառույթների և լիազորությունների հստակեցում և լիարժեք կիրարկում՝ 2019-2020 ուս.տարի:
- Մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքի նորացմամբ պայմանավորված անհրաժեշտ կանոնակարգային և նորմատիվային փաստաթղթերի պարբերական նորացում և համալրում՝ 2018-2021 թթ.:
- Մասնաճյուղի կառավարման և տեղեկատվական ապահովման համակարգերի ինտեգրում Համալսարանի կառավարման և միասնական տեղեկատվական ապահովման համակարգերի հետ՝ 2019-2020 ուս.տարի:
- Մասնաճյուղի վարչական կազմի պլանային վերապատրաստումներ Համալսարանում իրականացվող կատարելագործման դասընթացներում՝ համաձայն Համալսարանում հաստատված ժամանակացույցի:
- Մասնաճյուղի կառավարման տարբեր մակարդակներում և ոլորտներում ուսանողական կառույցի մասնակցության ապահովում՝ համաձայն Համալսարանում ընդունված ցուցանիշների և ձևերի պլանավորման ու կանոնակարգող փաստաթղթի պահանջների՝ 2017թ.:

Ն Պ Ա Տ Ա Կ 5

ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԼԱՆԱԶԱՓ ՀԱՄԱԼՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ

ԽՆԴԻՐ 5.1. Բարելավել և համալրել Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը՝ կրթական ծրագրերի բարեփոխումների և որակի ապահովման արդի պահանջներին համահունչ, ապահովել դասախոսների վերապատրաստման և կատարելագործման շարունակական գործընթաց:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Կատարել պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատում՝ կրթական ծրագրերի որակի ապահովման և զարգացման պլաններին համապատասխանության տեսակետից:
- Ստեղծել և իրականացնել դասախոսական կազմի համալրման և զարգացման հեռանկարային ծրագիր և կողմնորոշիչ ժամանակացույց ըստ ուսումնական ստորաբաժանումների և մասնագիտական ուղղությունների:
- Ներդնել դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների գործուն համակարգ և գնահատման ընթացակարգ՝ արդյունքները հիմք ընդունելով մրցույթի, վերակոնտրակտավորման, միջտարակարգային առաջընթացի և նյութական խրախուսման համար:
- Ապահովել հիմնական դասախոսական կազմի անխտիր մասնակցությունը դասախոսների կատարելագործման առկա համալսարանական ծրագրերին, նրանց գիտական ու մանկավարժական շարժունությունը:
- Ներդնել Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կատարելագործված ռեյտինգային համակարգ:

ԽՆԴԻՐ 5.2. Բարելավել Մասնաճյուղի հաստիկացուցակի պլանավորման գործընթացը և բարձրացնել հաստիքների օգտագործման արդյունավետությունը: Ապահովել դասախոսական և վարչակազմի երկրասարդացում և շարունակական որակական առաջընթաց:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Բարելավել հաստիքների պլանավորումը և բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը: Շարունակել ուսանողների, դասախոսների և ուսումնասօժանդակ կազմի թվաքանակների միջև քանակական հարաբերակցությունների լավարկման գործընթացը՝ նպատակն ունենալով ապահովել հստակ հիմնավորված, որակին չխաթարող, հաստիքախնայողական քաղաքականություն:
- Ապահովելով դասախոսների որակական կազմի բարելավման և միջին տարիքի նվազման կայուն միտումներ:
- Պլանավորել Մասնաճյուղի երիտասարդ դասախոսների, մագիստրոսների, ասպիրանտուրայի ընդունելությունը դասախոսական կազմի համալրման առաջնային կարիքների ապահովման նպատակով, հասնել Մասնաճյուղից ասպիրանտուրայի շրջանավարտների՝ Մասնաճյուղում առնվազն երեք տարի աշխատելու օրենսդրական պահանջի անխտիր և արդյունավետ իրագործմանը:

ԽՆԴԻՐ 5.3. Ապահովել և խթանել ուսանողական կառույցների դերակատարությունը դասախոսների գնահատման գործում:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Կարևորել Մասնաճյուղի ուսանողական կառույցի դերակատարությունը կրթության որակի բարձրացման երաշխիքների ստեղծման և Մասնաճյուղի տարբեր կառույցներում իրականացվող գործընթացների թափանցիկության ապահովման գործում:

- Ապահովել Մասնաճյուղի ուսանողական կառույցի մասնակցությունը կառուցվածքային, ծրագրային և կազմակերպական փոփոխությունների պլանավորման և իրականացման գործընթացներում:

ԽՆԴԻՐ 5.4. Ապահովել Մասնաճյուղում անհրաժեշտ պայմաններ բարոյահոգեբանական պարզաճ մթնոլորտի ձևավորման համար և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար: Բարձրացնել աշխատակիցների և ուսանողների «հակակոռուպցիոն գրագիտության» մակարդակը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մշակել և իրականացնել Մասնաճյուղի հակակոռուպցիոն քաղաքականությունն ապահովող միջոցառումների պլան-ծրագիր՝ պարտադիր տարեկան վերլուծական հաշվետվություններով և արդյունքների լայն հրապարակայնացմամբ:
- Նպաստել կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարի գործունեության արդյունավետության բարձրացմանը:
- Մասնաճյուղի աշխատողների և ուսանողների համար շարունակել օգտագործել կոռուպցիոն երևույթների վերաբերյալ հավաստի տեղեկատվությունը տեղ հասցնելու հնարավորություններ և մատչելի ու ժամանակակից ձևեր (վստահության հեռախոսահամար և արկղ, բուհի էլեկտրոնային հասցե և այլն):
- Նպաստել ուսանողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ու իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:
- Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը:
- Համաձայն ուսումնական գործընթացի ժամանակացույցի ապահովել ուսանողներին ուսուցման բոլոր փուլերի տեղեկատվություն, ըստ գիտելիքների հսկման և գնահատման ռեյտինգային համակարգի դրույթների:
- Զարգացնել ուսուցման գործընթացում՝ ուսանող-դասախոս անհատական, արտալսարանային աշխատանքների կազմակերպումը, անհատական ուսուցման, ինտերակտիվ միջավայրի ապահովումը, օգտագործել Մասնաճյուղի ինտերակտիվ կապի հնարավորությունները, ստեղծել ամբիոնների ամպային էլեկտրոնային հարթակներ:
- Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման մրցույթների անցկացման ժամանակ կարևորել դասախոսների անձնային և բարոյահոգեբանական հատկանիշները՝ հաշվի առնելով ուսանողների և շրջանավարտների հարցման արդյունքները:

ԽՆԴԻՐ 5.5. Ապահովել Մասնաճյուղում Համահամալսարանական բարեվարքության և պոլիտեխնիկական մնայուն արժեքների պահպանման միջավայր:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ապահովել Մասնաճյուղում ակադեմիական բարեվարքության համահամալսարանական կողքերի պահպանումը և կարգապահական/վարչական միջոցների կիրառումը՝ սահմանված բարեվարքության կանոնների խախտման դեպքերում:
- Խրախուսել Մասնաճյուղի վարչակառավարչական կազմի, արհեստակցական միության և ուսանողական ինքնավարության մարմինների միջև կառուցողական համագործակցությանը միտված միջավայրի արմատավորումը:
- Շարունակել Մասնաճյուղում գործող մոնիթորինգի և քննաշրջանը վերահսկող հանձնաժողովների աշխատանքները, պարբերաբար քննարկել մշտադիտարկման արդյունքները և կայացնել համապատասխան որոշումներ:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Գիտական աստիճաններ ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի տոկոսը՝ առնվազն 55%:
- Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում, 2021թ.-ին՝ 2016-ի համեմատ՝ առնվազն 5%:
- Պրոֆեսորադասախոսական տարակարգերի համար աշխատավարձերի տարբերակված սանդղակներ:
- Ուսանող/դասախոս քանակական հարաբերակցությունը՝ 12:1:
- Ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը՝ առնվազն 6:1:
- Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության կատարելագործված համակարգի ներմուծում՝ 2019-2020 թթ.:
- Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման կատարելագործված ռեյթինգային գործող համակարգի ներմուծում՝ 2019-2020 թթ.:
- Կատարելագործման ծրագրերում ընդգրկված հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը՝ 60%:
- Մասնաճյուղում կոռուպցիայի դեպքերի կամ դրանց վերաբերյալ հնչած հիմնավոր բողոքերի բացակայություն:
- Բարեվարքության Համալսարանական կողքերի կիրարկում Մասնաճյուղում՝ 2018 թվականից:

Ն Պ Ա Տ Ա Կ 6

ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՃԸ, ԴՐԱՆՑ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ

Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական կայունությունը ռեսուրսների ձևավորման բազմազանեցմամբ և արդյունավետ կառավարմամբ:

Մասնաճյուղի բնականոն գործունեության և առաջընթացի կարևորագույն երաշխիքը, ֆինանսական կայունությունն է, ինչպես նաև ակտիվ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը: Ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը, ֆինանսական ներհույքի մեծացումը և ուսանողական համակազմի պահպանումը շարունակում են մնալ Մասնաճյուղի համար կարևորագույն ռազմավարական խնդիրներ:

Ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից, առաջնահերթ խնդիրներն են ռեսուրսների արդյունավետ կառավարումն ու ռեսուրսախնայողության քաղաքականության իրականացումը:

ԽՆԴԻՐ 6.1. Նպատակաուղղել Մասնաճյուղի ֆինանսական պլանավորումը առաջադրված ռազմավարական խնդիրների իրագործմանը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Կիրառել ռազմավարական երկարաժամկետ պլանավորումը (2017-2021 թթ.) Մասնաճյուղի գործունեության բոլոր հիմնական բնագավառներում. ուսանողական համակազմ, կադրային և տեղեկատվական ռեսուրսներ, նյութատեխնիկական բազա, ֆինանսական ռեսուրսներ, աշխատանքի վարձատրություն:
- Ապահովել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխումը և կառավարման գործընթացների համաձայնեցումը:
- Իրականացնել տարեկան բյուջեի պլանավորում՝ հաշվեկշռված բյուջետային ցուցանիշների հիման վրա:
- Մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի պահպանման համար հնարավորինս մեծացնել և պահպանել Մասնաճյուղի պահուստային ֆոնդը:

ԽՆԴԻՐ 6.2. Բազմազանեցնել Մասնաճյուղի ֆինանսական ներհույքը՝ ապահովելով դրա մեծացումը Մասնաճյուղի զարգացման կարիքներին համապատասխան:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձգտել պետբյուջետային ֆինանսական ծավալների կայուն աճի՝ մասնագիտությունների ցանկի հետագա լավարկման, պետական գիտակրթական ծրագրերին մասնաճյուղի մասնակցության ընդլայնման միջոցով:
- Ավելացնել Մասնաճյուղի ծրագրերի և ծառայությունների մարքեթինգի և առևտրայնացման գործընթացների իրականացումը գործունեության բոլոր բնագավառներում:
- Բազմազանեցնել և ընդլայնել արտաբյուջետային միջոցների աղբյուրները:
- Շարունակել համագործակցությունը աջակից կազմակերպությունների հետ Մասնաճյուղի զարգացման ծրագրերն հնարավորինս իրականացնելու նպատակով:

ԽՆԴԻՐ 6.3. Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների կառավարման և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Կատարելագործել ֆինանսական կառավարումը Մասնաճյուղում՝ ֆինանսական գործունեության նորմատիվային բազայի հետագա զարգացման, կառավարման ինֆորմացիոն համակարգերի օգտագործման և կադրային կազմի վերապատրաստման ու համալրման միջոցով:

- Մշակել և ներդնել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգ: Բարելավել նյութական արժեքների հաշվառման գործընթացը:
- Իրականացնել ռեսուրսախնայողության հետևողական քաղաքականություն, մշակել և ներդնել էներգիայի, ջրի, կապի և այլ նյութական ռեսուրսների խնայողության տեխնիկական և կազմակերպչական միջոցներ:
- Նվազեցնել Մասնաճյուղի վարչական ծառայությունների ծախսերը՝ դրանց գործունեության արդյունավետության բարձրացման միջոցով:
- Ներդնել Համալսարանի կողմից մշակված, աշխատողների տարբեր տարակարգերի հաստիքների օգտագործման արդյունավետության գնահատման ցուցանիշները, իրականացնել ներքին կադրային աուդիտ և ստեղծել նորմատիվային բազա՝ հաստիքների խնայողական պլանավորման համար:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Արտաբյուջետային մուտքերի աճը 2016թ. նկատմամբ՝ առնվազն 5%:
- Գիտության, հետազոտական ծրագրերին ուղղված միջոցների աճ՝ առնվազն 5%-ով:
- Կայունացման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում՝ առնվազն 5%:
- Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 6%:
- Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 4%:
- Աշխատավարձի ֆոնդի աճ՝ առնվազն 10%-ի չափով:
- Մասնաճյուղի հիմնական հաստիքային կազմի (պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական, սպասարկող) աշխատավարձի ֆոնդում վարչական ծախսերի մասնաբաժինը՝ ոչ ավել քան 25%:
- Ֆինանսական օգնություն (ներառյալ ուսման վարձի զեղչերը) ստացող ուսանողների հարաբերությունը համալսարանի վճարովի համակազմում սովորողներին՝ 1/7:

Ն Պ Ա Տ Ա Կ 7

ԶԱՐԳԱՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՆՅՈՒԹԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ

ԽՆԴԻՐ 7.1. Շարունակել Մասնաճյուղի ուսումնական մասնաշենքերի վերականգնման ու վերակառուցման սկսված գործընթացը, ապահովել ուսումնական գործընթացի նորմատիվային պահանջները ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղում:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձևավորել մասնաշենքերի, ենթակառուցվածքների հիմնանորոգման և վերակառուցման հնգամյա փուլային պլան և իրագործել այն:
- Ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների մեկ ուսանողին ընկնող նորմերի պահպանումը:

- Իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ՝ ապահովելով ֆոնդի պատշաճ տեխնիկական վիճակը և այն հնարավորինս հագեցնել ժամանակակից գույքով և սարքավորումներով:
- Մասնաճյուղում տեղադրել անվտանգության արդի համակարգ:
- Ավելացնել Մասնաճյուղի արտաքին լուսավորությունը :
- Զարգացնել լաբորատորիաների նյութատեխնիկական բազան:
- Նկուղային հարկում առկա 3 սենյակները ձևափոխել ապաստարանների:
- Ջերմամեկուսացնել ջրամատակարարման համակարգը և ջեռուցման համակարգի որոշ մասը:
- Վերանորոգել մասնաշենքերի տանիքների չվերանորոգված հատվածները:
- Կոսմետիկ վերանորոգել անձրևների և այլ հետևանքներով վերանորոգման ենթակա տարածքները:
- Ավելացնել և գեղեցկացնել արտաքին կանաչապատումը:
- Դուրս գրել կամ օտարել շահագործման համար ոչ պիտանի ապրանքները:

ԽՆԴԻՐ 7.2. Կրթական և հեղափոխական ծրագրերի զարգացման կարիքներին և որակի պահանջներին համահունչ շարունակել մասնաճյուղի ուսումնալաբորատոր բազայի զարգացումն և արդիականացումը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մշակել Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային պլան:
- Օգտագործել Վանաձորի մասնաճյուղի հարևանությամբ գործող տեխնոլոգիական կենտրոնի եզակի հնարավորությունները, ի շահ Մասնաճյուղի նյութատեխնիկական պայմանների ընդլայնման՝ խթանելով և զարգացնելով Մասնաճյուղի և տեխնոլոգիական կենտրոնի միջև համագործակցային կապերը:
- Շարունակել Մասնաճյուղի ուսումնական պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի համալրման գործընթացները:

ԽՆԴԻՐ 7.3. Զարգացնել Մասնաճյուղի հիմնական սոցիալական ծրագրերը, բարելավել սոցիալական ինֆրակառուցվածքը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մշակել և իրականացնել աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակի շարունակական բարելավման երկարաժամկետ ծրագիր՝ նախատեսելով սոցիալական ծրագրերին և միջոցառումներին հատկացումների հաշվեկշռի պարբերական ավելացում մասնաճյուղի բյուջեում:
- Շարունակել համագործակցել ապահովագրական ընկերության հետ, ապահովելով աշխատակիցների առողջապահական ապահովագրությունը:
- Նպաստել մշակութային և մարզական ծրագրերի համակողմանի զարգացմանը Մասնաճյուղում, խթանել ուսանողների և աշխատողների ակտիվ մասնակցությունը Մասնաճյուղի մշակութային և մարզական կյանքին:
- Համալսարանի բոլոր մասնաշենքերում բարելավել էլեկտրաէներգիայի, ջրի և ջերմամատակարարումները, ամենուրեք ապահովել կենսագործունեության անվտանգության և բնապահպանական չափորոշիչ պահանջների իրականացումը:

ԽՆԴԻՐ 7.4. Ապահովել տեխնոլոգիական տեխնոլոգիաների կիրառության հեղաշրջանի ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը Մասնաճյուղի գործունեության բոլոր ոլորտներում:

Ռազմավարության հիմնական ուղղությունները.

- Ապահովել տեխնոլոգիական կարողությամբ լսարանների առկա ռեսուրսների շարունակական ընդլայնման և տեխնիկական վերազինման գործընթաց, աջակցել մայր կրթահամալիրի հետ հեռաուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ ինֆրակառուցվածքի զարգացման գործընթացին:
- Շարունակել խթանել Մասնաճյուղում տարաբնույթ էլեկտրոնային ռեսուրսների մշակումն ու ներդրումը, ինչպես նաև վիրտուալ լաբորատորիաների զարգացումը:
- Աջակցել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառմանը Մասնաճյուղի հետազոտական և կրթական ծրագրերում՝ օգտագործելով ամպային տեխնոլոգիաների հնարավորությունները:
- Շարունակել պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնասօժանդակ անձնակազմերի վերապատրաստումը՝ Մասնաճյուղի միասնական տեղեկատվական համակարգում աշխատանքի, ինչպես նաև արագ փոփոխվող կրթական համակարգում ճկուն և արհեստավարժ դառնալու համար:

ԽՆԴԻՐ 7.5. Շարունակել կատարելագործել և ընդլայնել Մասնաճյուղի տեղեկատվական բազան՝ ապահովելով դրա համընդհանուր մատչելիությունն ու արդյունավետ օգտագործումը՝ կրթական և հեղաշրջանային կարիքներին համահունչ:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Պարբերաբար իրականացնել Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների առկա վիճակի ուսումնասիրություն՝ զարգացման առաջնահերթությունները որոշելու նպատակով:
- Զարգացնել Մասնաճյուղի գրադարանի էլեկտրոնային ընթերցասարահի հնարավորությունները: Ապահովել մայր կրթահամալիրի էլեկտրոնային գրադարանի ռեսուրսների մատչելիությունը:
- Պարբերաբար արդիականացնել ՀԱՊՀ ինտերնետային կայքում Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսները: Մասնաճյուղի կայքը դարձնել եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
- Իրականացնել Մասնաճյուղի համակարգչային պարկի շարունակական թարմացման գործընթաց: Ապահովել լիցենզավորված ծրագրերի շահագործումը:
- Հասնել ուսումնական մասնագիտությունների դասընթացների առնվազն 75%-ի ապահովվածությանը էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական նյութերով (դասախոսությունների տեքստեր, առարկայական ծրագրեր, թեստավորման փաթեթներ, սլայդներ, հղումներ և այլն): Ապահովել այդ ռեսուրսների մատչելիությունը:
- Ընդլայնել Մասնաճյուղի ինտերնետ-տեղեկատվական ռեսուրսների օգտագործման տեխնոլոգիական և տեխնիկական գործիքամիջոցների կազմը:

ԽՆԴԻՐ 7.6. Ընդգրկել Մասնաճյուղը համալսարանական միասնական տեղեկատվական համակարգում՝ ապահովելով անընդհանուր աճող տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարումը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձևավորել Մասնաճյուղի կառավարման միասնական տեղեկատվական բազա՝ առանձին բնագավառների տվյալների բազաների ստեղծման և ինտեգրման հիման վրա:
- Զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի համակարգչային ներքին ցանցը՝ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման համար անհրաժեշտ հուսալիության, մասշտաբայնության, պաշտպանվածության և արտադրողականության նոր պահանջներին համապատասխան:
- Ապահովել մայր կրթահամալիրի հետ ներքին ցանցի հուսալի և անվտանգ աշխատանքի անհրաժեշտ պայմաններ:
- Խթանել ուսումնական գործընթացում «ուսանող-դասախոս» հարաբերումների էլեկտրոնային ձևերի մշակումը, ներդրումը և շարունակական զարգացումը:

ԽՆԴԻՐ 7.7. Դառնալ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և ներդրման ուսումնա-հետազոտական տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Նպաստել Լոռու մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը՝ ապահովելով կրթական լայնամասշտաբ ծառայություններ, օգտագործելով Մասնաճյուղի, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի և մայր բուհի հնարավորությունները:
- Նպաստել տարածաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը՝ ապահովելով հետազոտական և նորարարական արդիական ծառայություններ, օգտագործելով Մասնաճյուղի և մայր կրթահամալիրի գիտական ներուժը և հետազոտական-ինովացիոն ենթակառուցվածքները:
- Շարունակել ընդլայնել և խորացնել համագործակցությունը պետական, հանրային և ոչ կառավարական կառույցների ու հիմնադրամների հետ՝ բնակչությանը, մասնավորապես դպրոցական համայնքին մատուցվող ծառայությունների ընդլայնման և բազմազանեցման նպատակով:
- Մարզի զարգացման ծրագրին համահունչ, որտեղ Լոռին հայտարարվում է սմարթ մարզ, Մասնաճյուղում հիմնել սմարթ լսարան:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային պլանի առկայություն:
- Մեկ ուսանողին ընկնող ուսումնական մակերեսները Մասնաճյուղում՝ ոչ պակաս պետական չափորոշիչով սահմանված 8 ք.մ-ից:
- Մասնաճյուղի մասնաշենքերի հիմնանորոգման և վերակառուցման ծախսերի հաշվեկշիռը Մասնաճյուղի տարեկան բյուջեում՝ 3%:
- Սոցիալական ծրագրերին ուղղվող հատկացումների հաշվեկշիռի աճ մասնաճյուղի արտաբյուջեում՝ առնվազն 2% (հնգամյակի վերջում):
- Մասնաճյուղում տեղադրված անվտանգության արդի համակարգ:
- Արդիականացված լաբորատոր բազա:
- Արտաքին լուսավորության բավարար մակարդակ:

- Նկուղային հարկում կահավորված ապաստարանների առկայություն:
- Ջերմամեկուսացված ջրամատակարարման համակարգ:
- Մասնաշենքերի վերանորոգված տանիքներ:
- Գեղեցիկ արտաքին կանաչապատում:
- Տեխնոլոգիական կարողությամբ և հեռաուսուցման լսարանների թվի աճ՝ 20%:
- Ուսումնական գործընթացում էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների հաշվեկշիռը՝ առնվազն 70-75%:
- Դասավանդման գործընթացում էլեկտրոնային տեխնոլոգիաներ կիրառող հիմնական դասախոսների հաշվեկշիռը՝ առնվազն 75%:
- Համակարգչային տեխնիկայի արդիականացում 30%:
- Յուրաքանչյուր ուսանողին բաժին ընկնող և ուսումնական նպատակներով օգտագործվող առնվազն 0,15-0,2 ժամանակակից համակարգիչ:
- Մասնաճյուղի բոլոր մասնաշենքերում գործող անլար կամ լարային ինտերնետային կապ:
- Կենտրոնական կրթահամալիրի հետ գործող հեռաուսուցման ինֆրակառուց:
- Սմարթ լսարանի հիմնում՝ մինչև 2020թ.:
- Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ արդյունավետ համագործակցություն, Լոռու մարզում յուրատեսակ տեխնոլոգիական կրթական միջավայրի ձևավորում:

Ն Պ Ա Տ Ա Կ 8

ԸՆԴԱՅՆԵԼ ԵՎ ԽՈՐԱՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻՋՆԵՍԻ ՀԵՏ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Մասնաճյուղի զարգացման համար կարևոր նշանակություն ունի պատվիրատու կառույցների հետ գործընկերային արդյունավետ կապերի առկայությունը, ուստի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի Մասնաճյուղը, որը հանրությանը մատուցում է տեխնոլոգիական, ինժեներական կրթություն, պատշաճ նկարագրի ձևավորման և պահպանման համար կարևորում է հանրության, արտաքին շահակիցների հետ արդյունավետ կապերի ստեղծումը ու անընդհատ զարգացումը, որն էլ շարունակում է մնալ Մասնաճյուղի ռազմավարական զարգացման ուղղություններից մեկը: Մասնաճյուղը յուրաքանչյուր տարի ձգտում է ընդլայնել գործընկերային կապերը պատվիրատու գործարար, արտադրական և այլ կազմակերպությունների, հասարակության լայն շրջանակների, մարզային հանրային կառույցների, այդ թվում նաև՝ ԶԼՄ-ների հետ, խթանել Մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների, նվիրատու և հովանավոր կազմակերպությունների ու անհատների ներդրումների ծավալների աճը: Մասնաճյուղը պարտավոր է զարգացնել և խորացնել իր մասնակցությունը տարածաշրջանի տնտեսության առջև ծառայած տեխնոլոգիական և արտադրական խնդիրների լուծման գործընթացներում, ստեղծել և ընդլայնել փոխշահավետ կոմերցիոն կապեր արտադրական ձեռնարկությունների և ոլորտային գերատեսչությունների հետ, բազմակողմանիորեն ներգրավել հանրային ծրագրերում:

Անհրաժեշտ է զարգացնել Մասնաճյուղի ներգրավվածությունը միջազգային համագործակցության ծրագրերում, նպաստել միջազգային շարժունության ծրագրերում ուսանողների և դասախոսների ընդգրկվածության ընդլայնմամբ:

ԽՆԴԻՐ 8.1. Ընդլայնել և բազմազանեցնել գործընկերային կապերը Մասնաճյուղի պատվիրապու կազմակերպությունների և տարածաշրջանային կառույցների հետ:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Իրականացնել տարածաշրջանի աշխատաշուկայի առկա վիճակի ու զարգացման միտումների մոնիթորինգ՝ Լոռու մարզի զբաղվածության կենտրոնի հետ համատեղ և թարմացնել Մասնաճյուղի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազան՝ հների վերահաստատման և նորերով համալրման նպատակով:
- Ձևավորել երկարաժամկետ պայմանագրային հարաբերություններ հիմնական գործատու կազմակերպությունների հետ՝ ուսմանը համատեղ աշխատանքի, ուսումնական գործընթացի լաբորատոր և գործնական բաղադրիչները՝ այնտեղ իրագործելու և շրջանավարտների աշխատանքային գործունեությանը նախապատրաստելու նպատակով: Հատկապես կարևորել Վանաձորի Տեխնոլոգիական Կենտրոնի հետ երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների պահպանումը և զարգացումը:
- Ընդլայնել գործատուների ներգրավվածությունը Մասնաճյուղի ուսումնական գործընթացում, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության և պաշտպանության, պրակտիկաների կազմակերպման և այլ ուսումնական հարցերում՝ համահունչ աշխատաշուկայի պահանջարկին և դրա զարգացման միտումներին:
- Զարգացնել «բուհ-գործատու» փոխկապակցության համակարգը, ակտիվ մասնակցելով տարածաշրջանում կազմակերպվող աշխատանքի տոնավաճառներին:
- Զարգացնել Մասնաճյուղի համագործակցության առկա փորձը տարածաշրջանի ոլորտային առաջատար կազմակերպությունների հետ, պայմանագրերի, արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող համատեղ նախագծերի շրջանակներում:

ԽՆԴԻՐ 8.2. Խթանել Մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների և նվիրապու անհատների ու կազմակերպությունների ներդրումների ծավալի աճը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները.

- Պարբերաբար թարմացնել շրջանավարտների տվյալների բազան՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել հաջողակ շրջանավարտների հետ կապերի հաստատմանը:
- Ձևավորել Մասնաճյուղի զարգացման առաջնային կարիքներից բխող դրամաշնորհային հայտերի փաթեթ, նպաստել դրա տարածմանը և պոտենցիալ շնորհատուների հավաքագրմանը:
- Օգտագործել Մասնաճյուղի 60-ամյա հոբելյանի առիթը՝ Մասնաճյուղի օգտին արտաքին գովազդարշավի և նոր գործակցային կապեր հաստատելու նպատակով:

ԽՆԴԻՐ 8.3. Խթանել Մասնաճյուղի մասնակցությունը մարզի սոցիալ-փնտրեսական զարգացման գործընթացներում, ակտիվացնել հանրային ծրագրերում Մասնաճյուղի ներգրավման ձևերը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Կազմակերպել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի ուսումնասիրություն, ձևավորել Մասնաճյուղի հնարավորությունների մարքեթինգային ծրագիր՝ ապահովելով դրա տարածումը հանրության շրջանում:
- Նպաստել Մասնաճյուղի ներգրավմանը մարզի տնտեսության առջև ծառայած տեխնոլոգիական և արտադրական խնդիրների լուծման գործընթացներում, հանրային կարիքներին ուղղված մարզային ծրագրերում, ստեղծել հանրօգուտ նոր ծառայություններ:
- Կազմակերպել Մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն՝ ապահովելով Մասնաճյուղի առավել արդյունավետ մասնակցությունը հասարակության արդի պահանջների բավարարման ծրագրերում:

ԽՆԴԻՐ 8.4. Զարգացնել և բազմազանեցնել հասարակայնության հետ կապերը՝ նպատակ ունենալով պահպանել և բարձրացնել Մասնաճյուղի դրական իմիջը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Շարունակել և զարգացնել Մասնաճյուղի ակտիվ համագործակցությունը ԶԼՄ-ների հետ, օպերատիվ լրատվությունը, սեփական գովազդային նյութերի հրատարակումը:
- Իրազեկել հասարակությանը լրատվական-գովազդային և մարքեթինգային բոլոր միջոցառումների մասին՝ նպատակ ունենալով պահպանել և ամրապնդել Մասնաճյուղի դրական իմիջը, նրա հասարակական վարկանիշի և տեսանելիության բարձրացումը:
- Հանրությանը ներկայացնել Մասնաճյուղի և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի սերտ համագործակցությունը՝ շեշտը դնելով արդի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության լայն հնարավորությունների վրա:

ԽՆԴԻՐ 8.5. Զարգացնել Մասնաճյուղի ներգրավումը միջազգային համագործակցության ծրագրերում, մեծացնել միջազգային նախագծերում մասնակցող դասախոսների և ուսանողների թիվը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները.

- Խթանել եվրոպական և ԱՊՀ բարձրագույն կրթական տարածքում ուսանողների շարժունությանը՝ ընդլայնելով և խորացնելով առաջատար գործընկեր համալսարանների հետ միջազգային փոխանակման ծրագրերը (Erasmus+, «ԱՊՀ Ցանցային համալսարան»):
- Զարգացնել և խորացնել համագործակցության առկա փորձն արտասահմանյան առաջատար բուհերի հետ՝ երկկողմ պայմանագրերի, արտաքին ֆինանսավորմամբ համատեղ նախագծերի և բուհական կոնսորցիումների շրջանակներում:
- Աջակցել Մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի ընդգրկմանը միջազգային գիտական նախագծերում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն նախագծերի ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնման և հայտերի մշակման հարցերում:

- Խրախուսել արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում Մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի կողմից հոդվածների հրատարակումը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը:
- Խթանել համալսարանական միջազգային ծրագրերում ուսանողների և դասախոսների մասնակցությունը:

ԽՆԴԻՐ 8.6. Նպաստել Մասնաճյուղի միջազգային ճանաչման և միջազգային հեղինակության բարձրացմանը:

Ռազմավարության հիմնական ուղղությունները.

- Ամրապնդել կապերը ՀՊՃՀ Շրջանավարտների միության և նրա արտասահմանյան մասնաճյուղերի հետ՝ ձևավորելով կայուն արտաքին գործակցային կապեր:
- Գովազդել ՀԱՊՀ ինստիտուցիոնալ և ծրագրային միջազգային հավատարմագրումները՝ նպաստելով նաև Մասնաճյուղի միջազգային դրական իմիջի ձևավորմանն ու ճանաչելիության բարձրացմանը:
- Օգտագործել միջազգային շարժունության ծրագրերը՝ խթանելով ուսանողների արտաքին կապերի զարգացմանը, ինչպես նաև ներգրավվել եվրոպական և միջազգային ուսանողական ծրագրերում:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- «Բուհ-գործատու» փոխկապակցության զարգացող գործուն համակարգ, գործընկեր կազմակերպությունների պարբերաբար թարմացվող տվյալների բազա՝ 2017-2021թթ.:
- Շրջանավարտների պարբերաբար թարմացվող տվյալներ՝ 2017-2021թթ.:
- Գործընկեր ձեռնարկությունների և կազմակերպությունների թիվը (ըստ կնքված պայմանագրերի)՝ առնվազն 50:
- Պայմանագրային հիմունքներով գործող համատեղ ուսումնական գործընկեր կազմակերպություններ (քոլեջներ, դպրոցներ)՝ 10/30:
- Մասնաճյուղի և Լոռու մարզի շահագրգիռ կազմակերպությունների հետ ամենամյա աշխատանքի տոնավաճառներ:
- Մասնաճյուղի PR ակտիվության աճ՝ առնվազն 1.3 անգամ:
- Մասնաճյուղի սեփական գովազդային միջոցառումների թվի աճը՝ առնվազն 1.3 անգամ:
- Մասնաճյուղի վերաբերյալ ՋԼՄ տարեկան անդրադարձների թվի աճը առնվազն՝ 1.3 անգամ:
- Մասնաճյուղի 60-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված հոբելյանական գովազդարշավ և Մասնաճյուղի կարիքներին ուղղված միջոցառումներ՝ 2019թ.:
- Արտասահմանյան, այդ թվում նաև ԱՊՀ երկրների առաջատար բուհերի հետ համատեղ իրականացվող, կրկնակի դիպլոմի շնորհմամբ, մագիստրոսական կրթական ծրագրեր՝ 1-2:
- Մասնակցություն միջազգային գիտակրթական ծրագրերում (ներառյալ ՀԱՊՀ-ում իրականացվող)՝ առնվազն 2:
- Շարժունության տարբեր ծրագրերում ներգրավված ուսանողների ընդհանուր թիվ՝ մինչև 5:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Հրաման թիվ 5/Ր

Ք.Վանաձոր

« 09 » 02 2017թ.

**ՀԱՊՀ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀԱՊՀ հոգաբարձուների խորհրդի 2016 թվականի փետրվարի 5-ի նիստի թիվ 02/16-03 որոշմամբ հաստատված կանոնադրության (նոր խմբագրության) 35-րդ կետի 14-րդ ենթակետը, ի կատարումն ՀԱՊՀ Հոգաբարձուների խորհրդի 29.01.2016թ., թիվ 10/16-02 որոշման հանձնարարականի

Հրամայում եմ

1. Ս.թ. փետրվարի 9-ից ձևավորել <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքային հանձնախումբ՝ հետևյալ կազմով.
 Խառատյան Ա. Գ.- մասնաճյուղի տնօրեն (նախագահ),
 Նաջարյան Մ.Թ.- մասնաճյուղի ՌԻՄՔ վարիչ (նախագահի տեղակալ),
 Բալայան Վ.Ա.- մասնաճյուղի ԳԳԱ փոխտնօրեն,
 Դադբաշյան Մ.Ա.- մասնաճյուղի ՎՏԱ գծով փոխտնօրեն,
 Սիմոնյան Մ.Մ.- մասնաճյուղի Տ և ՃՏ ֆակուլտետի դեկան,
 Հարոյան Է.Պ.- մասնաճյուղի ԲԳ և ՏՀ ֆակուլտետի դեկան,
 Մամյան Վ.Կ. – մասնաճյուղի որակի ապահովման և վերահսկման բաժնի վարիչ,
 Գյուրջինյան Ա.Հ.- մասնաճյուղի Շինարարություն և լեռնային գործ ամբիոնի վարիչ,
 Հակոբյան Ս. Շ.- մասնաճյուղի գլխավոր հաշվապահ,
 Բալյան Ա.Վ.- մասնաճյուղի համակարգչային լաբորատորիայի վարիչ,
 Մարգարյան Տ. Ա.-մասնաճյուղի որակի ապահովման և վերահսկման բաժնի տեսուչ,
 Ռամազյան Ա. – մասնաճյուղի գիտ. քարտուղար,
 Պետրոսյան Դ.- մասնաճյուղի ՈԻԽ նախագահի պաշտոնակատար:
2. Կազմակերպել ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի մշակման հանձնախմբի աշխատանքային գործընթացը՝ նկատի ունենալով ծրագրի համահամալսարանական քննարկման վերջնաժամկետը մինչև 2017թ. մարտի 31-ը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն

Ա.Խառատյան

**ՀՊՃՀ ՎԱՆԱՁՈՐԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2012-2016թթ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Մասնաճյուղի 2012-2016թթ. գործունեության վերլուծությունը կատարված է ըստ ռազմավարական ծրագրով հաստատված նպատակների:

Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և Նպատակ 1-ի կատարողականը

Հ/հ	Ռազմավարական ծրագրով նախանշված ցուցանիշները	Արդյունքները	
1.	Ընդունելության մասնագիտությունների հեռանկարային ցանկ	Ընդունելության մասնագիտությունների թիվը 2016/2012թթ. կազմել է <ul style="list-style-type: none"> • Բակալավր առկա - 5/8 • Բակալավր հեռակա - 5/5 • մագիստրատուրա առկա - 2/1 • մագիստրատուրա հեռակա - 1/0 	
2.	Հիմնական կրթական ծրագրերով համակազմի ծավալը 2016թվին 2012թ. նկատմամբ՝ 50 % աճ	22.7%	
3.	Հիմնական կրթական ծրագրերով համակազմը 2016թ. առնվազն՝ 800 - Բակալավրի ծրագրով, առկա ուսուցում՝ 500 - Հեռակա ուսուցման գծով՝ 300	2016թ.	2012թ.
		675 (586 +89բանակ) - առկա - 229+29 մագ - հեռակա - 319 +9 մագ	550 (490+60բանակ) - 229+27 մագ - 234
4.	ՀՀ և/կամ արտասահմանյան բուհերի հետ իրականացվող համատեղ կրթական ծրագիր՝ 1 մագիստրոսական ծրագիր	1	-
5.	Տարածաշրջանի ավագ դպրոցներում գործող ՀՊՃՀ ՎՄ հենակետային դասարան՝ առնվազն 1	-	-
6.	Ընդունելության ընդհանուր ծավալը 2016 թվին բոլոր կրթական ծրագրերով առնվազն՝ 200	բակալավր առկա - 58	81
		բակ. հեռակա - 59	55
		մագիստրատուրա - 24	10
		քոլեջներից - 14	5
		ընդամենը - 155	151
7.	Մասնաճյուղի ավագ դպրոցի դասարանների թիվը՝ 9	6	7
8.	Ընդունելության աջակցման և մարքեթինգի շուրջտարյա գործող համալսարանական կառույց	1	1

Ընդունելության գործընթացի և ուսանողական համակազմի վերլուծությունը բերում է հետևյալ եզրակացությունների:

Բակալավրի կրթական ծրագրով Մասնաճյուղի ուսանողական համակազմը առկա ուսուցման համակարգում մնացել է նույնը՝ 229 ուսանող, իսկ հեռակա ուսուցման համակարգում աճել է 36%-ով (234-ից՝ 319):

2016թ., ելնելով ընդունելության օպտիմալացումից, 8 մասնագիտությունների փոխարեն ընդունելություն է կատարվել 5 խոշորացված մասնագիտությունների գծով:

2015թ. մագիստրոսի կրթական ծրագրով կատարվել է հեռակա ուսուցման ընդունելություն «Շինարարություն» մասնագիտությամբ: 2016թ. դրությամբ պատկերը մագիստրատուրայում հետևյալն է.

առկա ուսուցման բաժնում ուսանողների թիվը 2012թ. նկատմամբ աճել է 27-ից՝ 29, հեռակա համակարգում ուսանողների թիվը՝ 7:

Այսպիսով, Մասնաճյուղի հիմնական կրթական ծրագրերով համակազմը 2016թ. կազմել է 675 ուսանող, 2012թ.-ին՝ 550, համակազմի ծավալը 2012թ. նկատմամբ աճել է 22.7% -ով:

Անհրաժեշտ է ավելի ակտիվ և արդյունավետ դարձնել կապերն ու շփումները Վանաձորի և մարզի դպրոցների, տեխնիկական ուղղվածությամբ միջին մասնագիտական հաստատությունների հետ, կազմակերպել և իրականացնել մարզի քոլեջների հետ ծրագրային և ուսումնամեթոդական բնույթի համատեղ գործառույթներ, հանդիպումների և ցուցահանդեսային-գովազդային հանդեսների կազմակերպման միջոցով ապահովել բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների հոսքը դեպի Մասնաճյուղ, ընդլայնել պոստենցիալ դիմորդների համար մագիստրատուրայի ընդունելությանը վերաբերող տեղեկատվության ծավալներն ու հասանելիությունը:

Վերջին 5 տարվա (2012-2016թթ.) ընդունելության արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ չնայած նրան, որ հիմնական կրթական ծրագրերով ընդունելության ծավալը 2016 թվին 2012թ. նկատմամբ աճել է 22,7 %-ով, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով համակազմի կողմնորոշիչ ցուցանիշը չի ապահովվել, որը պայմանավորված է հիմնականում արտաքին գործոններով:

Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և Նպատակ 2-ի կատարողականը

Հ/հ	Ռազմավարական ծրագրով նախանշված ցուցանիշները	Արդյունքները
1.	Առաջարկվող մասնագիտությունների վերանայված ցանկ նոր մասնագիտությունների ներդրումով	Առկա է
2.	ՀԱՊՀ ՎՄ բոլոր կրթական ծրագրերի (մասնագիտությունների) պետական հավատարմագրում՝ 2015թ.	Մեկ մասնագիտություն (Ծրագրային ճարտարագիտություն) ՀԱՊՀ կազմում անցել է միջազգային հավատարմագրում:
3.	ՀԱՊՀ ՎՄ ուսումնական ստորաբաժանումների գործունեության և կրթական ծրագրերի ինքնավերլուծություն, ըստ ՄԿՈԱԱԿ-ի սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների՝ 2012-2013թթ.	Առկա է, ընթացքում են հաջորդ ինքնավերլուծությանը նախորդող աշխատանքները
4.	ՀԱՊՀ ՎՄ որակի գնահատման և ապահովման գործող համակարգ՝ ամենամյա կատարելագործումով	Առկա է
5.	Հրատարակված մեթոդական աշխատանքների թիվ	36
6.	Վերանայված և մեթոդական ու կազմակերպական առումներով կատարելագործված կրեդիտային համակարգ՝ ներդրման ավարտը՝ 2012/13 ուս. տարի:	Առկա է
7.	ՀԱՊՀ ՎՄ դասախոսական կազմի մանկավարժական գործունեության ամենամյա գնահատման գործող ներքին համակարգ՝ սկսած 2012/13 ուս. տարվանից	Առկա է

Մասնաճյուղում ստեղծված են որակի ապահովման ներքին համակարգի իրականացման տարրերը, որոնք, ՀԱՊՀ-ի համապատասխան բաժնի հետ համատեղ ձևավորել են ՀԱՊՀ-ի որակի ապահովման միասնական վարչական մասնաճյուղային ենթակառուցվածք՝ իր մշտապես կատարելագործվող գործիքակազմով:

Մասնաճյուղում գործում է մշտական բնույթ կրող և իր դրական արձագանքը տարբեր շահակիցների կողմից ստացած քննաշրջանների ընթացքի վերահսկման կոմպլեքսային միջոցառումների հաջողված գործընթաց:

ՀԱՊՀ մերթոդական աջակցությամբ և համատեղ՝ ՀԱՊՀ որակի ապահովման պորտալում, Մասնաճյուղն 2015-2016 ուստարում առաջին անգամ մասնակցեց շրջանավարտներին ուղղված online-հարցմանը, որի նպատակն էր պարզել շրջանավարտների բավարարվածության աստիճանը Մասնաճյուղից իրենց ուսումնառության տարիների ընթացքում: Մասնաճյուղի մասնակցությունը՝ 100%:

Հաշվետու ժամանակաշրջանում ստեղծվել և հաջողությամբ գործում է «Մաթեմատիկա և գրաֆիկա» ամբիոնի «ամպային» փորձնական հարթակը (մնացած ամբիոնների համար հարթակների կառուցվածքները ստեղծված են, աշխատանքներ են տարվում տեղեկատվության թվայնացման և տեղադրման ուղղություններով):

Մասնաճյուղի որակի ապահովման և վերահսկման բաժինը համալրված է համապատասխան աշխատակազմով, կազմաբաժնիկայով և կահույքով, այն մշտապես համալրվում և արդիականանում է:

Մասնաճյուղի որակի ապահովման համակարգի բոլոր աշխատակիցները ստացել են որակի ապահովման ընդհանուր հարցադրումների, ինչպես նաև ինքնավերլուծության իրենց մասնաբաժինների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Պարբերաբար իրականացվող վերապատրաստումների և վարժանքների արդյունքում վերոհիշյալ աշխատակիցներից ոմանք մասնագիտական լուրջ աճ են գրանցում:

Մասնաճյուղի որակի ապահովման և վերահսկման բաժնի նախաձեռնությամբ իրականացվել են ՀԱՊՀ-ում և Մասնաճյուղում նախկինում մշակված, սակայն գործնականորեն գրեթե չփորձարկված, կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման ու վերահաստատման չափանիշների և ընթացակարգերի մասնակի վերանայումներ և լրամշակումներ, ապահովելով «դասախոսամետ»-ից՝ «ուսանողամետ» կրթությանը զանգվածային անցնելու բոլոր նախադրյալները:

Մասնաճյուղի որակի ապահովման ներքին համակարգի անձնակազմը, հաջողությամբ մասնակցելով միջազգային կրթական նախագծերին, հաջողությամբ ավարտել է իր աշխատանքները Tempus ծրագրի INARM և ARARAT նախագծերում, արձանագրելով դրական արդյունքներ և ստանալով նախագծերի համակարգողների դրական գնահատականները:

Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և Նպատակ 3-ի կատարողականը

Հ/հ	Ռազմավարական ծրագրով նախանշված ցուցանիշները	Արդյունքները
1.	Գիտական աստիճաններ ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը՝ առնվազն 50%:	Աստիճանակիր դասախոսների հաշվեկշիռը կազմում է 55.2 %
2.	Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում. 2016-ին՝ 2012թ. համեմատ առնվազն 10%-ով:	2012թ. պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը եղել է 57տարի, 2016թ. այն կազմել է 58 տարի: Աճել է 1.8%-ով:
3.	Պրոֆեսորադասախոսական տարակարգերի համար աշխատավարձերի տարբերակված սանդղակներ	Առկա է
4.	Ուսման վարձի գեղչերից օգտվող ուսանողների տոկոսը	22.6 %
5.	Ուսանող/դասախոս քանակական հարաբերակցությունը՝ 12:1:	2016 թվին հարաբերակցությունը կազմում է 11.4: 1 (675/59)
6.	Ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը՝ առնվազն 6:1:	2016թ. դրությամբ հարաբերակցությունը կազմում է 5.1:1 (675/131):
7.	Մասնաճյուղի ռազմավարական պլանի առկայություն	+
8.	Տվյալների տեղեկատվական բազաների առկայություն Մասնաճյուղի գործունեության հիմնական բնագավառների համար	+
9.	Տարեկան հաշվետվության նոր ձևաթերթ՝ Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների հիման վրա	+
10.	Հստակ գործող հակակոռուպցիոն	+

	քաղաքականություն՝ իրականացմանը նպաստող պայմանների, մեխանիզմների և գործընթացների համակարգով	
11.	Մասնաճյուղում կոռուպցիայի դեպքերի կամ դրանց վերաբերյալ հնչած հիմնավոր բողոքների բացակայություն	-

Գիտարկվող ժամկետում գրանցվել է Մասնաճյուղի հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի աճ 1.8%-ով (դասախոսական կազմի միջին տարիքը՝ 57-ից հասել է 58-ի): Գիտական աստիճան ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը կազմել է 55.2%՝ ապահովելով Ռազմավարական ծրագրով նախանշված առնվազն 50% ցուցանիշի կատարողականը:

Հիմնական դասախոսական կազմի հաստիքները նվազել են 3.1%-ով՝ 48.5 հաստիքից (2012թ.) մինչև 47.0 (2016թ.):

Արձանագրվել է ուսանող/դասախոս հարաբերակցության հետևյալ ցուցանիշը՝ այն 2012 թվին կազմել է 8.8:1, իսկ 2016թվին՝ 11.4:1 (Ռազմավարական ծրագրով նախատեսված էր 12:1): Փոփոխվել է նաև ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը: 2012 թվականին այն կազմել է 3.8:1 հասնելով 2016թվականին 5.1:1-ի (Ռազմավարական ծրագրով նախատեսված էր 6:1):

Նվազել է նաև վարչատնտեսական և օժանդակ անձնակազմի հաստիքային միավորները՝ 2012թվականին կազմել է 68 հաստիք, իսկ 2016 թվականին 63.75 հաստիք (6.25%):

Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և Նպատակ 4-ի կատարողականը

Հ/հ	Ռազմավարական ծրագրով նախանշված ցուցանիշները	Արդյունքները
1.	Նյութատեխնիկական բազայի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:	Նյութատեխնիկական բազան գործնականում համապատասխանում է պետական կրթական չափորոշիչների պահանջներին: Համապատասխանություն 80 %
2.	Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային և տարեկան պլանների առակայություն և կատարողական:	Իրականացել է համաձայն յուրաքանչյուր տարվա նախահաշվում հատկացված գումարների
3.	Մեկ ուսանողին ընկնող օգտակար մակերեսները՝ ոչ պակաս, քան պետական նորմատիվով սահմանված 8.0քմ:	Մեկ ուսանողին ընկնող օգտակար մակերեսները՝ 8.1քմ:
4.	Ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացման տարեկան հատկացումների հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում՝ 5%	Ստեղծվել են յոթ նոր լաբորատորաներ և կաբինետներ հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում 1.1%
5.	Սոցիալական ծրագրերին հատկացումների տոկոսը Մասնաճյուղի արտաբյուջեում՝ 7%	ՀԱԴՀ փաթեթային պայմանագիր է կնքվել Ռոսգոսստրախ ապահովագրական ընկերության հետ Մասնաճյուղի աշխատակիցների առողջապահական ապահովագրություն համար, որի ծախսերի 60% հոգում է Մասնաճյուղը, Սոցիալական ծրագրերի հաշվեկշիռը Մասնաճյուղի արտաբյուջեում 2016թ. կազմել է 12.5%
6.	Գրադարանային նոր ռեսուրսների ձեռքբերման տարեկան ծախսերի հաշվեկշիռը Մասնաճյուղի բյուջեում՝ 1%	Բարելավվել են գործող գրադարանի պայմանները, ստեղծվել է էլեկտրոնային գրադարան: Ծախսերի հաշվեկշիռը Մասնաճյուղի բյուջեում՝ 0.1%

7.	Մարզական համալիրի զարգացման հնգամյա ծրագիր և կատարողական	Փակ մարզադահլիճին զուգահեռ գործում են վոլեյբոլի, բասկետբոլի, մինի ֆուտբոլի և թենիսի բաց մարզահրապարակները
8.	Մասնաշենքերի, այդ թվում՝ լսարանային ֆոնդի վերանորոգման ծախսերի հաշվեկշիռը Մասնաճյուղի բյուջեում՝ 6%	Մասնաշենքերի, այդ թվում՝ լսարանային ֆոնդի վերանորոգման ծախսերի հաշվեկշիռը Մասնաճյուղի բյուջեում՝ 0.5%
9.	Ուսումնական և ոչ ուսումնական նպատակներով օգտագործվող տարածքների հարաբերակցությունը Մասնաճյուղում՝ 8:1	Ուսումնական և ոչ ուսումնական նպատակներով օգտագործվող տարածքների հարաբերակցությունը Մասնաճյուղում՝ 6.8:1

Հաշվետու ժամանակաշրջանում ստեղծված լաբորատորիաներ և կաբինետներ.

- Տեխնոլոգիական կարողություններով լսարան
- Ռոբոտատեխնիկական լսարան
- Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոն
- Ճարտարագիտական և համակարգչային գրաֆիկայի կաբինետ
- Մեքենագիտության և էլեկտրատեխնիկայի լաբորատորիա
- Համակարգչային լաբորատորիա-լսարան
- Էլեկտրոնային ընթերցասրահ
- ✓ Տեխնոլոգիական կարողություններով Հարութ Պրոնոգյանի անվան լսարանը համալրվել է տեսակոնֆերանսների և վիզուալիզացիայի համակարգով, որին զուգահեռ գործում են նաև 8 տեխնոլոգիական կարողություններով լսարաններ:
- ✓ Ստեղծվել է փակ մարզադահլիճ, որի համար ձեռք է բերվել համապատասխան սպորտային գույք:
- ✓ Կաթսայատան N2 կաթսայի համար ձեռք է բերվել և տեղադրվել ժամանակակից գազայրիչ իր բոլոր ավտոմատ համակարգերով:
- ✓ Վերանորոգվել են «Դ» և «Ե-1» մասնաշենքերի 1-ին հարկի միջանցքը, ճաշարանին հարող միջանցքը, դահլիճի մուտքի դռները, բեմը, խորանը, նստարանները և լուսավորության սարքավորումները: Վերանորոգվել են նաև 2-րդ և 3-րդ հարկերը և աստիճանավանդակները, ավագ դպրոցի ընթացիկ վերանորոգում, մեկ ուսանողին ընկնող մակերեսը 8,1քմ:
- ✓ Վերանորոգվել և ամրացվել է տանիքի 180մ ջրհորդանը, փոխարինվել են տանիքի ջրահեռացման 80մ երկարությամբ խողովակաշարերը:
- ✓ Ուսանողների, աշակերտների և աշխատակիցների ջանքերով համալսարանի տարածքում կատարվել է ծառատունկ և կանաչապատում, ինչպես նաև կատարվել են տարածքի մաքրման աշխատանքներ:
- ✓ «Ա» և «Բ» մասնաշենքերի հիման վրա ստեղծված Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը արդյունավետ գործում է, որի հետ համագործակցության շրջանակներում ցանկապատվել է Մասնաճյուղի 9.2 հա զբաղեցրած տարածքը, ամբողջությամբ բարեկարգվել է Մասնաճյուղի բակը, տեղադրվել են նստարաններ և աղբարկղներ, կատարվել են կանաչապատման աշխատանքներ, կառուցվել են չորս նոր մարզահրապարակներ. մինի ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի և դաշտային թենիսի, ամֆիթատրոն, դեկորատիվ լողավազան: Վերագործարկվել է 2x400 ԿՎԱ ենթակայան:
- ✓ Ընթացքի մեջ է աշակերտական տեխնոլոգիական նոր լաբորատորիայի կահավորումը, ուսանողական խորհուրդը կահավորվել է համապատասխան գույքով, տրամադրվել է համակարգչային տեխնիկա:
- ✓ Մասնաճյուղի ֆակուլտետներին, ամբիոններին և այլ ստորաբաժանումներին տրամադրվել է համակարգչային տեխնիկա:

Այսպիսով, Մասնաճյուղի կրթական և հետազոտական պահանջներին համահունչ նյութատեխնիկական բազայի ապահովման, ինչպես նաև սոցիալական ծրագրերի զարգացման և համապատասխան ենթակառուցվածի պահպանման և զարգացման խնդիրները գրեթե ամբողջությամբ կատարվել են և գալիք ուղղակիորեն ծրագրի մեջ կընդգրկվեն նոր խնդիրներ և կշարունակվեն ընթացքի մեջ գտնվողները:

Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և Նպատակ 5-ի կատարողականը

Հ/հ	Ռազմավարական ծրագրով նախանշված ցուցանիշները	Արդյունքները
1.	2016 թվականին՝ արտաբյուջետային մուտքերի աճը 2012թ. նկատմամբ՝ առնվազն 20%:	2012թ. համեմատ արտաբյուջետային մուտքերը աճել են 22 %-ով:
2.	Ստեղծված կայունացման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում առնվազն 7%:	Կայունացման ֆոնդը 2016թ. տարեվերջին կազմեց 7.3%:
3.	Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը (ներառյալ կառուցվածքային ստորաբաժանումների ֆոնդերի մասհանումները)՝ առնվազն 10%:	Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը կազմում է 5%
4.	Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 5%:	Կապիտալ և ընթացիկ վերանորոգումներ՝ 3.2 %:
5.	Աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճը՝ առնվազն 20%:	2016թ. աշխատողների միջին ամսական աշխատավարձը 2012թ. Նկատմամբ ընդհանուր առմամբ աճել է՝66.2%: Միջին հաշվով պրոֆեսորադասախոսական անձնակազմինը՝ 1,6 անգամ, այլ աշխատողներ՝ 1,5 անգամ:
6.	Ֆինանսական օգնություն (ներառյալ ուսման վարձի զեղչերը) ստացող ուսանողների հարաբերությունը համալսարանի վճարովի համակազմում սովորողներին՝ 1/10:	2.7/10

- Մասնաճյուղի արտաբյուջետային եկամուտները 2012թ. համեմատ աճել է 22%-ով ի հաշիվ ուսանողական համակազմի ավելացման: Սակայն 2015-2016թթ. կտրուկ ավելացել են բուհի կողմից ուսանողներին տրամադրված ուսման վարձի լրիվ և մասնակի փոխհատուցումները:
- Ռազմավարական պլանով նախատեսված առնվազն 7% կողմնորոշիչ ցուցանիշները կայունացման ֆոնդի համար կազմել է 7.3%:
- Զարգացմանն ուղղված միջոցները պլանով նախատեսված էր 2%, այս ուղղությամբ կա առաջընթաց. շնորհիվ Tempus ծրագրի նախագծերում Մասնաճյուղի մասնակցության՝ այն կազմել է 5% (Մասնաճյուղի կենսագործունեության համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների և այլ բաղկացուցիչների ձեռք բերման և նոր լաբորատորիաների, կաբինետների, համակարգչային լսարանների ստեղծում ու կահավորում):
- Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը պլանով նախատեսված 5 %-ի փոխարեն կատարվել է 3.2%-ով, որի նվազ լինելը պայմանավորված է մասնաճյուղի մասնաշենքերի վերակառուցված լինելու հանգամանքով:
- Ուսանողների ուսման վարձերի զեղչերը կազմել են վճարովի ուսուցումից ուսման վարձերի հաշվեգրված եկամուտների 7.1%-ը:

Ամփոփելով 2012-2016թթ. Մասնաճյուղի ռազմավարական պլանով առաջադրված խնդիրներն ու արդյունքներն՝ ըստ առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշների կատարողականի կարելի է նշել, որ զարգացման հիմնական խնդիրները համահունչ են ֆինանսական կայունության պահպանմանը և ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և Նպատակ 6-ի կատարողականը

Հ/հ	Ռազմավարական ծրագրով նախանշված ցուցանիշները	Արդյունքները
1.	Տեղեկատվական ռեսուրսների զարգացման հնգամյա պլան	Ավարտման փուլում է

2.	Գործող էլեկտրոնային ընթերցասրահ	Ստեղծված է, ռեսուրսների ավելացում
3.	Առնվազն 8-10 տեխնոլոգիական կարողությամբ լսարաններ	9
4.	Հեռուսուցման գործող լսարան	Լսարանը գործում է
5.	Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների հաշվեկշիռը՝ առնվազն 50%	50%
6.	Տեխնոլոգիաների կիրառում՝ հիմնական դասախոսների առնվազն 50%-ի կողմից	50%
7.	Յուրաքանչյուր ուսանողին բաժին ընկնող և ուսումնական նպատակներով օգտագործվող առնվազն 0,15-0,2 համակարգիչ	0.155
8.	Մասնաճյուղի բոլոր մասնաշենքերում գործող անլար ինտերնետային կապ	Wi-Fi ծածկույթ՝ երեք մասնաշենքերում և բակում
9.	Կենտրոնական կրթահամալիրի հետ գործող հեռուսուցման ինֆրակառուց	Հեռուսուցման ինֆրակառուցը գործում է

- 2012-2016թթ. Մասնաճյուղը համալրվել է 47 նոր աշխատանքային համակարգչով՝ հասցնելով դրանց թիվը 112-ի, 5 պրոյեկտորով, 10 տպիչ սարքով, 7 երթուղիչով և այլ օժանդակ սարքավորումներով:
- Մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումներն ապահովված են լարային կամ անլար ինտերնետ կապով:
- Մասնաճյուղն արդեն ունի առանձնացված ինտերնետ կապ՝ 5 IP հասցեներով:
- Ուսումնական գործընթացում օգտագործվում են 91 (81.25 %) համակարգիչներ:
- Վարչական և հետազոտական նպատակներով օգտագործվում են 21 (18.75 %) համակարգիչներ: Բոլոր ամբիոններն ապահովված են անհատական համակարգիչներով:
- Մասնաճյուղի կայք-էջն է՝ <http://polytechvan.am/>, էլեկտրոնային հասցեներն են seuavan@yahoo.com և seuavan@gmail.com: 2013թ.-ից ակտիվ գործում է Մասնաճյուղի ֆեյսբուքյան պաշտոնական էջը՝ ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ անունով:
- Ի լրումն Մասնաճյուղում գործող տեխնոլոգիական կարողություններով լսարանների, ժամանակակից սարքավորումներով և 5 հզոր համակարգիչներով հագեցած «Մեքենագիտության և էլեկտրատեխնիկայի» լաբորատորիայի, արդեն գործարկվել է տեսակոնֆերանսների բազմաֆունկցիոնալ սարքը:

Գիտատեխնիկական գրադարան

- Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը ներառում է (2016թ.) 48233 կտոր գրականություն, այդ թվում՝ 42858 դասագիրք, 5238 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1790 ուսումնաօժանդակ ձեռնարկ, 2 գիրք-քարտեզ և այլ 1450 կտոր գրականություն, (2012թ.՝ 46928 կտոր գրականություն, այդ թվում՝ 42618 դասագիրք, 3156 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1790 ուսումնաօժանդակ ձեռնարկ, 2 գիրք-քարտեզ և այլ 1450 կտոր գրականություն):
- Գրադարանում գործում են 3 ընթերցասրահներ, այդ թվում՝ էլեկտրոնային ընթերցասրահը:

Մասնաճյուղի ավագ դպրոցի ռոբոտաշինության խմբակի աշակերտները մասնակցել են «Ական փնտրող ռոբոտներ» մրցույթին և արժանացել խրախուսական մրցանակի՝ 100.000 դրամ, որն ամբողջությամբ տրամադրվել է սահմանում կանգնած զինվորներին, ինչպես նաև «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում

կազմակերպված բնագիտատեխնիկական ստուգատեսին՝ «Ռեբոտներն առօրյայում» անվանակարգում, ներկայացնելով «Մաքրուի» ռեբոտին և ստացել են գլխավոր մրցանակ:

Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և Նպատակ 7-ի կատարողականը

Հ/հ	Ռազմավարական ծրագրով նախանշված ցուցանիշները	Արդյունքները
1.	Մասնաճյուղի հետազոտական նախագծերին մասնակցությունը 2016 թվին առնվազն՝ - գիտամանկավարժական կազմի 50%-ը - մագիստրանտներ և բակալավր՝ 15%	47 (70.1 %) 83 (14.4 %)
2.	Մասնաճյուղի հետազոտական նախագծերի ծավալը 2016 թվին առնվազն՝ - գիտության արտաբյուջետային ֆինանսավորման ծավալի տարեկան աճ՝ 10%-ով - պետական բյուջեով նախատեսված հետազոտական աշխատանքների ծավալի աճ՝ 10%	Ֆինանսավորվել է «Մարդատար ավտոմեքենաների արգելակային կոճղակների արտադրության հիմնում» ծրագիրը:
3.	Առնվազն 1 նոր հետազոտական լաբորատորիա	Ֆինանսավորվել է Շփագիտության բազային գիտահետազոտական լաբորատորիայի ղեկավարումը: 2 նոր գիտահետազոտական լաբորատորիա:
4.	Գործընկեր ձեռնարկությունների թիվը (ըստ կնքված պայմանագրերի)՝ առնվազն 20:	Ըստ կնքված պայմանագրերի՝ 40

Մասնաճյուղի գիտահետազոտական գործունեությունը 2012-2016թթ. ծավալվել է ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի Ռազմավարական ծրագրի Նպատակ 7-ով առաջադրված խնդիրներին համապատասխան. հետազոտական ծրագրերում դասախոսական կազմի և հետազոտական ծրագրերի տեսակների և ծավալների աճի ապահովում, կիրառական հետազոտությունների արդյունավետության բարելավում, գիտական ծրագրերում մասնաճյուղի գործունեության ընդլայնման և ինովացիոն գործունեության համար նպաստավոր պայմանների ապահովում:

Համարելով առենախոսական հետազոտությունները, որպես Մասնաճյուղի հետազոտական աշխատանքների կարևորագույն բաղադրամաս, նախորդ հնգամյակում պաշտպանվել են 5 առենախոսություններ, այդ թվում 2 դոկտորական:

Մասնաճյուղում իրականացվող հետազոտական նախագծերի և մարզի արդյունաբերական ձեռնարկությունների առջև կանգնած հիմնախնդիրների, մասնավորապես՝ նոր նախագծերի և մրցունակ արտադրատեսակների ստեղծման հետ, ընդլայնվել է դասախոսների մասնակցությունը հետազոտական նախագծերում: «Մեքենաշինություն և մետալուրգիա» ամբիոնում կատարվել են «Արգելակային հանգույցների շփագույգերի աշխատունակության հետազոտումը» գիտահետազոտական աշխատանքները: «Շփագիտության բազային գիտահետազոտական լաբորատորիայի» 2015թ. նախատեսված աշխատանքների շրջանակում իրականացվել են «Մարդատար ավտոմեքենաների արգելակային կոճղակների արտադրության հիմնում» ներդրումային ծրագիր, որը ֆինանսավորվում կատարվել է ՀԱՊՀ գիտական խորհրդի կոմիտեի հատկացված գումարներից: Ստացվել են փորձանմուշներ և որոշվել են նրանց շահագործողական հատկությունները:

«Մաթեմատիկայի և գրաֆիկայի» ամբիոնի վարիչ Ռ. Դավաթյանը համատեղությամբ աշխատել է ՀԱՊՀ «Կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի» ֆակուլտետի «Մաթեմատիկական անալիզ և ֆունկցիաների տեսություն» թեմայով պետբյուջեից ֆինանսավորվող №15T-1A083 նախագծում:

Նյութերի նուրբ և գերնուրբ մանրացման և տարբեր կոմպոզիցիոն նյութերի և շինանյութերի ստացման գործընթացների ուսումնասիրության շրջանակներում ստացվել են բարելավված հատկություններով շինվածքներ: Հետազոտությունների իրականացման նպատակով համատեղ գործընկեր կազմակերպության հետ միասին նախագծվել և պատրաստվել է նոր գիտաարտադրական թրթռաղաց:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում մագիստրանտների ակադեմիական շարժունության մեծացման շրջանակներում, 2015թ. 1 մագիստրանտ ուսումը շարունակել է Պորտուգալիայի բուհում:

Հաշվետու ժամանակաշրջանում լրամշակվել են մագիստրատուրայում՝ որպես բարձրագույն կրթության 2-րդ աստիճանում, մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների ուսումնական պլանները:

Նախորդ հինգ տարիների ընթացքում աճել է ասպիրանտուրա ընդունվածների թիվը: Ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում սովորողների ընդհանուր թիվը հաշվետու ժամանակահատվածում կազմել է՝ 1 ասպիրանտ և 2 հայցորդ:

Դիտարկվող ժամանակահատվածում Մասնաճյուղում ստեղծվել են 2 նոր գիտահետազոտական լաբորատորիաներ:

Աճել է նաև հետազոտական նախագծերում Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցչությունը: Նախագծերում ներգրավվածների թիվը 4-ն է:

Խիստ կարևորվել են գիտական հետազոտությունների կիրառական արդյունավետության բարձրացման ու արդյունքների առևտրայնացման խնդիրները:

Ընդլայնվել է Մասնաճյուղում հրատարակվող հոդվածների հանդեսների ցանկը: Կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ մագիստրատուրայում և բակալավրիատում սովորող ուսանողների մասնակցությամբ: Մասնաճյուղում գիտական սեմինարների անցկացումը կրում է ամենամսյա, շարունակական բնույթ, աճել է մասնակցությունը համահամալսարանական «Պոլիտեխնիկական ընթերցումներին»:

Մասնաճյուղի գիտական ներուժի զարգացման, դասախոսների և ուսանողների ավելի լայն ներգրավման, հետազոտությունների կիրառական ուղղվածության խթանման, դրանց արդյունավետության և ինովացիոն մրցունակության բարձրացման և հատկապես, ստացված արդյունքների առևտրայնացման խնդիրները մնում են Մասնաճյուղի զարգացման մոտակա կարևորագույն ռազմավարական խնդիրների շարքում՝ որպես ինժեներական գիտության և Մասնաճյուղի ընդհանուր հզորացման ու ֆինանսական ներհուքերի ձևավորման լավագույն գրավականներ:

Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով նախանշված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները և Նպատակ 8-ի կատարողականը

Հ/հ	Ռազմավարական ծրագրով նախանշված ցուցանիշները	Արդյունքները
1.	Համալսարան-արդյունաբերություն փոխկապակցության զարգացվող գործուն համակարգ, գործընկեր կազմակերպությունների տարեկան պարբերականությամբ թարմացվող տվյալների բազա (սկսած 2012-13 ուս. տարվանից)	Շարունակվում է տվյալների պարբերական թարմացումը
2.	Շրջանավարտների տվյալների բազա՝ էլեկտրոնային կապի հնարավորություններով	Ընդհանուր առմամբ առկա են վերջին 9 տարվա շրջանավարտների տվյալներ
3.	Գործընկեր կազմակերպություններ	40
4.	Գործընկեր քոլեջներ, դպրոցներ	10/ 15
5.	Մասնաճյուղի և Լոռու մարզի Առևտրաարդյունաբերական պալատի, զբաղվածության կենտրոնի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ ամենամսյա «աշխատանքի տոնավաճառներ»	2
6.	Մասնաճյուղի ծառայությունների մարքեթինգի ծրագիր	Շարունակվում է միջոցառումների իրականացումը
7.	Մասնաճյուղի PR ակտիվության աճ՝ առնվազն 1.5 անգամ (2013թ. նկատմամբ)	1.5
8.	Արտասահմանյան, այդ թվում՝ ԱՊՀ երկրների առաջատար բուհերի հետ իրականացվող ուսանողական, մագիստրոսական և ասպիրանտական 1-2 համատեղ ծրագրեր	1 (ՀԱՊՀ կազմում)
9.	Մասնաճյուղի սեփական գովազդային միջոցառումների թվի աճը առնվազն՝ 1.5 անգամ	1,55

10.	Մասնաճյուղի վերաբերյալ ՋԼՄ անդրադարձերի թվի աճը առնվազն՝ 1.5 անգամ:	61 ՋԼՄ անդրադարձ
-----	---	------------------

2010թ. նոյեմբերից Մասնաճյուղը ընդգրկված է Tempus ծրագրի Եվրոպական կրթական համագործակցության երկու նախագծերում.

- Development and Integration of University Self-Assesment Systems (DIUSAS) – Համալսարանի ինքնազննահատման համակարգերի զարգացում և ինտեգրում,
- Promoting Internationalization and Comparability of Quality Assurance in Higher Education (PICQA) - Բարձրագույն կրթության որակի ապահովման համադրելիության և միջազգայնացման աջակցություն:

2012թ. հաջողությամբ իրականացվել են 2 նոր ծրագրեր.

- ARARAT (Armenian Coordination Agency “University Employer”) - Հայկական կոորդինացիոն գործակալություն «Համալսարան- գործատու»,
- INARM (Informatics and Management: Bologna Style Qualifications Frameworks) - Ինֆորմատիկա և կառավարում. Բոլոնիայի ոճի որակավորումների շրջանակ:

Պետք է նշել, որ շնորհիվ Tempus-ի նախագծերի, բացի ծրագրային թիրախային նպատակներից, նոր կապեր ստեղծելու հնարավորություն է ընձեռնվել համագործակցային կոնսորցիումի անդամ մեծ թվով Եվրոպական, ԱՊՀ և ՀՀ համալսարաններից ու այլ գործընկեր կազմակերպություններից յուրաքանչյուրի հետ: Մասնաճյուղի աշխատակիցներից մեկը, միաժամանակ ընդգրկվել է ՀԱՊՀ-ի կողմից իրագործվող նմանատիպ մեկ այլ Tempus-ի DESIRE նախագծում, մեկ այլ աշխատակից ընդգրկված է Tempus-ի MATHGEAR նախագծում:

2015-2016 ուսումնական տարում ունեցել ենք արտասահմանում սովորող մեկ ուսանող, ով կրկնակի դիպլոմի ծրագրով գերազանցությամբ ավարտել է ուսումը նաև Պորտուգալիայի Բրագանսա համալսարանում և ընդունվել առկա ասպիրանտուրա:

ՋԼՄ-ների միջոցով պարբերաբար հանրությանն են մատուցվում անդրադարձեր, որոնք վերաբերել են Մասնաճյուղի գործունեության տարաբնույթ ուղղություններին՝ ընդունելություն, միջազգային ծրագրեր, ուսանողական գիտաժողով, պետական քննություններ և ավարտական աշխատանքների պաշտպանություններ, պոստենցիալ դիմորդների համար մասնագիտական կոմիտեի ֆիլմեր, ուսանողների կողմից նկարահանված գովազդային տեսահոլովակ:

Համալրվել է գործատու կազմակերպությունների հետ Մասնաճյուղի կնքած պայմանագրերի թիվը:

Մասնաճյուղում գործում է տարբեր ընկերություններում պրակտիկաների կազմակերպման 40 պայմանագիր, ինչպես նաև կնքվել են 15 պայմանագրեր դպրոցների և 10 քոլեջների հետ:

Մասնաճյուղում, ի հավելումն մի շարք գործընթացների, նախապես մշակված հարցաթերթիկներով իրականացվել են 4 թիրախային խմբերի (ուսանող, շրջանավարտ, դասախոս, գործատու) էլեկտրոնային հարցումներ, որոնց նպատակն է աշխատաշուկայի համալիր կարիքների վեր հանումն ու բուհի ուսումնական ծրագրերը (կրթական վերջնարդյունքները) թարմացնելը, ինչպես նաև՝ որակավորման ոլորտային շրջանակի մշակումը, ինչը նոր մշակույթ է ՀՀ բարձրագույն կրթական տարածքում:

**ՀԱՊՀ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒԺԵՂ ՈՒ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ,
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ**

Ուժեղ կողմեր (Strengths)	
➤	Տարածաշրջանում Մասնաճյուղի մենաշնորհային դիրքը ինժեներական կրթության և գիտության ասպարեզում
➤	Տեխնոլոգիական կրթական համալիրի ձևավորման հնարավորություն. ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ, նրա ավագ դպրոց, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն
➤	Արդյունավետ գործընկերային կապեր տարածաշրջանի ձեռնարկությունների, քոլեջների, ավագ դպրոցների, ՎՏԿ-ի հետ
➤	Մասնաճյուղում շարունակական կրթություն ապահովելու հնարավորություն (ավագ դպրոց, բակալավրիատ, մագիստրատուրա)
➤	Միջազգային ծրագրերում մասնակցության դրական փորձ
➤	Մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրերի կազմման և հաջող իրականացման արդյունավետ փորձ
➤	Տարածքային պայմանների բարելավման հնարավորություններ
➤	Շրջանավարտների լայն ներգրավվածություն մարզի քաղաքական, տնտեսական ղեկավար կառույցներում և ընտրովի մարմիններում
Թույլ կողմեր (Weaknesses)	
➤	Զարգացման ծրագրերի համար անբավարար ֆինանսական ռեսուրսներ, ֆինանսավորվող գիտական նախագծերի բացակայություն, չզարգացած գիտական ինֆրակառուցվածք
➤	Մասնաճյուղի դասախոսական կազմի և վարչակազմի բարձր միջին տարիք
➤	Դասախոսական կազմի համալրման և երիտասարդացման անբավարար տեմպեր և սահմանափակ ռեսուրսներ
➤	Ձեռնարկությունների հետ տնտայայմանագրային հետազոտական կապերի բացակայություն
➤	Փոքր ուսանողական թվակազմով ուսումնական խմբերի մեծ տեսակարար կշիռ և ուսանող/դասախոս ցածր քանակական հարաբերակցություն
➤	Դասախոսական կազմի՝ հետազոտական աշխատանքներում անբավարար ներգրավվածություն և ցածր շահագրգռվածություն
➤	Մասնաճյուղի արտաբյուջետային ֆինանսական ներհոսքում վճարովի ուսուցման գերակա չափաբաժին
Հնարավորություններ (Opportunities)	
➤	Մասնաճյուղի կրթական և հետազոտական գործունեության մեջ՝ ՀԱՊՀ ներուժի արդյունավետ օգտագործում
➤	ՎՏԿ-ի հետ համատեղ ծրագրերի իրագործում
➤	Ձևավորված միջազգային կապերի արդյունավետ օգտագործում
➤	Ընդլայնված ներգրավվում մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերում
➤	Ընդլայնվող գործակցություն գործընկեր, գործատու կազմակերպությունների հետ
➤	Լոռու մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման կայուն միտումներ (ՎՏԿ, Instigate և այլն) և դրանից բխող բարձրորակ ինժեներական աշխատուժի աճող պահանջարկ
➤	Հեռավար կրթության, ուսումնառության ոչ ավանդական ճկուն ձևերի, նոր կրթական տեխնոլոգիաների ներմուծում՝ Մասնաճյուղի մուտքի հնարավորինս ընդլայնման նպատակով
➤	Նախաձեռնողական մասնակցություն մարզի և տարածաշրջանի տնտեսական զարգացման և տեխնոլոգիական նորաստեղծության ծրագրերին
➤	Մասնաճյուղի, նրա ավագ դպրոցի շահեկանորեն տարբերվող գովազդարշավի փորձի առկայություն, 2019թ. Մասնաճյուղի 60-ամյակին նվիրված գովազդարշավի հնարավորություն

	Սպառնալիքներ (Threats)
➤	Լոռու մարզում արտագաղթի և գործազրկության բարձր ցուցանիշներ, դպրոցների շրջանավարտների նվազող թիվ, ժողովրդագրական վատթարացող սցենար
➤	Լոռու մարզի արդյունաբերության զարգացման հեռանկարների անորոշություն, ինժեներների ցածր պահանջարկ
➤	Ընդունելության նվազող մրցույթային ցուցանիշներ ինժեներական մասնագիտությունների համար
➤	Դիմորդների քանակի նվազման և ֆինանսական սահմանափակ ռեսուրսների պայմաններում, աճող մրցակցություն Վանաձորում այլ բուհերի հետ
➤	Աճող անհամապատասխանություն Մասնաճյուղի գիտակրթական ներուժի համալրման կարիքների և աշխատանքի վարձատրության առկա հնարավորությունների միջև
➤	Մասնաճյուղի կենսաապահովման ծախսերի շարունակական աճ